ՀԱՅԱՍՏԱՆԻ, ԱԴՐԲԵՋԱՆԻ և ՎՐԱՍՏԱՆԻ ՄԱԿՐՈՏՆՏԵՍԱԿԱՆ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐԻ ՀԱՄԵՄԱՏԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՃ[1]:


Վերջին տաս տարիներին տնտեսական աճի տեմպը միջին հաշվով ամենաբարձրը եղել է Հայաստանում՝ 5.9 տոկոս: Վրաստանում և Ադրբեջանում այդ ցուցանիշը համապատասխանաբար կազմում է 4.6 տոկոս և 4.4 տոկոս:

Աղյուսակ 1: Համախառն ներքին արդյունքի ֆիզիկական ծավալի ինդեքսը նախորդ տարվա նկատմամբ

	1992	1993	1994	1995	1996	1997	1998	1999	2000	2001	2002	2003	2004
Հայաստան	-41.8	-8.8	5.4	6.9	5.9	3.3	7.3	3.3	5.9	9.6	13.2	13.9	10.1
Ադրբեջան	-22.6	-23.1	-19.7	-11.8	1.3	5.8	10.0	7.4	11.1	9.9	10.6	11.2	10.2
Վրաստան	-44.9	-29.3	-11.4	2.6	11.2	10.6	3.1	2.9	1.8	4.8	5.5	11.1	8.4

1994-2004 թվականների ընթացքում Հայաստանին հաջողվել է ավելի քան կրկնապատկել ՀՆԱ մակարդակը (տես նկար 1):


Նկար 1: Համախառն ներքին արդյունքի կուտակային աճը 2004 թվականի վերջի դրությամբ (1991 թ. = 100%)



[1] Բաժնում օգտագործված տեղեկատվությունը 1991 - 1998 թվականների համար վերցված է Межгосударственный статистический комитет СНГ, "10 лет Содружества Независимых Государств", статистический сборник, իսկ 2000-2003 թվականների համար՝ Межгосударственный статистический комитет СНГ, "Содружество Независимых Государств в 2003 году", статистический ежегодник.

Այնուամենայնիվ 2004 թվականի արդյունքներով մեկ շնչի հաշվով ՀՆԱ-ի ցուցանիշը ամենաբարձրը Վրաստանում է՝ 1134 ԱՄՆ դոլար, երկրորդ տեղում Հայաստանն է 1105 ԱՄՆ դոլար, իսկ Ադրբեջանում այդ ցուցանիշը կազմում է 1041 ԱՄՆ դոլար (տես նկար 2): 2005 թվականին համաձայն Արժույթի Միջազգային Հիմնադրամի Վրաստանում և Ադրբեջանում կանխատեսվում է համապատասխանաբար 6 տոկոս և 21.6 տոկոս տնտեսական աճ: Ադրբեջանում նման աննախադեպ բարձր տնտեսական աճ կանխատեսվում է վառելիքի արդյունահանման ոլորտի հաշվին: (Նշենք որ առաջին եռամսյակում արձանագրվել է 10.8 տոկոս տնտեսական աճ):

Նկար 2: Մեկ շնչին ընկնող Համախառն ներքին արդյունքի դինամիկան 1995-2004 թվականներին



* - Ադրբեջանի համար 2003-2004 թվականների տվյալների աղբյուրը՝ The state statistical commitree of Azerbaijan Republic, "Azerbaijan in figures 2005" 2003, 2004

** - Վրաստանի համար 2004 թվականի տվյալների աղբյուրը՝ Geogia: Poverty Reduction Strategy, Paper Progress Report, IMF March 2005

ՀԱՄԱԽԱՌՆ ԱՌԱՋԱՐԿ:

Համաձայն պաշտոնական տեղեկատվության Հայաստանում ՀՆԱ -ի կառուցվածքը ըստ եկամուտների էապես տարբերվում է հարևան երկրներից: Այսպես, մեր մոտ շահույթ և աշխատավարձ համամասնությունը գրեթե հավասար է, այն դեպքում երբ, և՝ Ադրբեջանում, և՝ Վրաստանում եկամուտների գերակշիռ մասը, մոտ 70 տոկոս ստացվում է շահույթի տեսքով (տես աղյուսակ 2): Նշենք, որ թե սոցիալական և թե տնտեսական տեսանկյունից աշխատավարձերի մեծ կշիռը գերադասելի է:

Աղյուսակ 2: ՀՆԱ կառուցվածք ըստ եկամուտների, տոկոսով ընդհանուրի նկատմամբ

երկիր	աշխատավարձ	զուտ հարկեր	համախառն շահույթ	ՀՆԱ
Հայաստան (2002)	40	11	49	**100**
Ադրբեջան (2002)	21	9	70	**100**
Վրաստան (2003)	20	9	71	**100**

Տնտեսության ճյուղային զարգացումների տեսանկյունից երեք երկրներն էլ որոշակիորեն առանձանում են: Շինարարության և ծառայությունների կշիռը Հայաստանում և Ադրբեջանում գրեթե նույն է և գրեթե նույն տեմպերով աճում է (տես աղյուսակ 3): Ծառայությունները Ադրբեջանում կազմում են ՀՆԱ-ի 30 տոկոսը, Հայաստանում 34 տոկոսը, իսկ շինարարությունը Ադրբեջանում 13.5 տոկոս, Հայաստանում 15.3 տոկոս: Վրաստանում ծառայություններին բաժին է ընկնում ՀՆԱ-ի կեսից ավելին իսկ շինարարությանը ընդամեը 6 տկոսը: Գյուղատնտեսությունը Հայաստանում և Վրաստանում գրեթե նույն մասնաբաժինը ունի, մոտ 23 տոկոս, այն դեպքում երբ Ադրբեջանում այդ ցուցանիշը կազմում է 11.5 տոկոս: Ադրբեջանի տնտեսության համար ամենամեծ նշանակությունը ունի արդյունաբերությունը մոտ 40 տոկոս, Հայաստանում և Վրաստանում այդ ցուցանիշը համապատասխանաբար կազմում է 19.7 տոկոս և 13.3 տոկոս:

Աղյուսակ 3: Համախառն ներքին արդյունքի ճյուղային կառուցվածքը

	1998	1999	2000	2001	2002	2003	2004*
Արդյունաբերություն							
Հայաստան	19.9	21.2	21.9	20.1	18.8	19.9	19.7
Ադրբեջան	22.0	28.2	36.0	37.6	37.4	37.3	37.8
Վրաստան	12.4	13.0	13.6	12.2	13.2	13.3	
Գյուղատնտեսություն							
Հայաստան	30.9	27.0	23.3	25.6	23.4	21.4	22.5
Ադրբեջան	18.0	18.4	16.1	14.8	14.0	12.4	11.5
Վրաստան	31.0	29.2	23.9	25.2	23.7	23.5	
Շինարարություն							
Հայաստան	8.0	8.3	10.3	9.7	12.6	15.5	15.3
Ադրբեջան	13.0	10.9	6.5	5.8	8.7	11.2	13.5
Վրաստան	4.7	3.7	3.7	3.9	5.1	6.3	
Ծառայություններ							
Հայաստան	31.9	35.1	35.4	34.9	35.4	34.1	34.1
Ադրբեջան	43.0	38.5	35.2	33.8	31.9	31.4	29.9
Վրաստան	47.2	48.3	52.6	52.2	51.4	50.8	
Զուտ անուղղակի հարկեր							
Հայաստան	9.3	8.5	9.1	9.7	9.7	9.1	8.4
Ադրբեջան	4.1	4.0	6.2	7.9	8.0	7.7	7.3


Վրաստան	4.8	5.8	6.1	6.6	6.7	6.1	
ՀՆԱ	**100.0**	**100.0**	**100.0**	**100.0**	**100.0**	**100.0**	**100.0**

* - ՀՀ ԱՎԾ «ՀՀ սոցիալ-տնտեսական իրավիճակը 2004թ. հունվար-դեկտեմբերին»

- The State Statistical Committee of Azerbaijan Republic, "**AZERBAIJAN IN FIGURES 2005**"

Ներկայումս երեք երկրներից 1991 թվականին գրանցված արդյունաբերական արտադրանքի թողարկման ծավալներին առավել մոտ է գտնվում Հայաստանը՝ 79 տոկոս, այնուհետև Ադրբեջանը՝ 42 և Վրաստանը 29 տոկոս (տես նկար 3):

Նկար 3: Արդյունաբերական արտադրանքի ծավալի ինդեքս, տոկոսներով 1991 թվականի նկատմամբ



Հայաստանի համեմատաբար բարձր ցուցանիշը պայմանավորված է երկու հանգամանքով: Նախ, չնայած որ 1992 թվականին անկումը ավելի մեծ է եղել, քան հարևան երկրներում, մեզ հաջողվել է ավելի շուտ՝ 1994 թվականից, դուրս գալ անկման փուլից: Վրաստանում և Ադրբեջանում արդյունաբերական արտադրանքի ծավալների աճ արձանագրվել է համապատասխանաբար 1996 և 1997 թվականներից սկսած: Մյուս կողմից, Հայստանի համեմատ Վրաստանում դրսևորվել է արդյունաբերության բավականին անկյուն զարգացման տեմպեր, իսկ Ադրբեջանում տեմպերը եղել են կայուն, սակայն ավելի դանդաղ քան Հայաստանում:

Հայաստանի և Վրաստանի արդյունաբերության կառուցվածքաում առավել նշանակություն ունի մշակող արդյունաբերությունը որին բաժին է ընկնում ընդհանուր արդյունաբերության համապատասխանաբար 63 տոկոսը և 62 տոկոսը: Երկու հանրապետություններում էլ համեմատաբար զարգացած է սննդի արդյունաբերությունը, որը կազմում է ընդհանուրի մոտ 30 տոկոսը: Հատկանշական է, որ Ադրբեջանի տնտեսությունում սննդի արդյունաբերությունը նշանակալի դեր չի զբաղեցնում՝ այն կազմում է ընդհանուրի 4.4 տոկոսը: Ադրբեջանի համար առավել կարևորվում է լեռնահաբային արդյունաբերությունը՝ 57.4 տոկոս (տես աղյուսակ 4):

Աղյուսակ 4: Արդյունաբերության ճյուղային կառուցվածքը, տոկոսով ընդհանուրի նկատմամբ

	Հայաստան 2004*	Ադրբեջան 2004**	Վրաստան 2003
Էլեկտրաէներգիայի, գազի և ջրի արտադրություն և բաշխում	19.1	9.1	30
Լեռնահանքային	17.8	57.4	8
Մշակող արդյունաբերություն, այդ թվում	63.1	33.5	62
սննդի արդյունաբերություն	*31.1*	*4.4*	*29*
մանածագործական և կարի արտադրություն	*0.5*	*0.6*	*0.4*
փայտի մշակում և փայտե իրերի արտադրություն	*0.3*	*0.03*	*1*
քիմիական արդյունաբերություն	*2.0*	*18.3*	*3*
այլ ոչ մետաղական արտադրատեսակների արտադրություն	*3.4*	*1.9*	*5*
մետաղագործական արդյունաբերություն	*12.9*	*4.9*	*9*
մեքենաների և սարքավորումների արտադրություն	*1.2*	*2.6*	*0.3*
այլ ճյուղեր	*11.7*	*0.8*	*14.3*
ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅՈՒՆ	**100**	**100**	**100**

* - ՀՀ ԱՎԾ «ՀՀ սոցիալ-տնտեսական իրավիճակը 2004թ. հունվար-դեկտեմբերին»

** - The State Statistical Committee of Azerbaijan Republic, "**AZERBAIJAN IN FIGURES 2005**"

Պարենային ապահովվածության տեսանկյունից էական նշանակություն ունեցող ցորենի և կարտոֆիլի մշակման ծավալների պատկերը հետևյալն է (տես աղյուսակ 5, 6): Ինչպես տեսնում ենք 2003 թվականից Հայաստանում մշակված կարտոֆիլի ծավալները եղել են ավելի քան Վրաստանում՝ մեկ շնչի հաշվով կազմելով 158 կգ: Նույն տարի արձանագրվել է նաև կարտոֆիլի արտահանում դեպի Վրաստան: Ինչ վերաբերվում է ցորենին, ապա երեք երկրներն էլ հանդիսանում են ներմուծող: Իսկ մեկ շնչի հաշվով մշակվող ցորենի ամենացածր ցուցանիշը Հայաստանում է:

Աղյուսակ 5: Կարտոֆիլի արտադրություն

	1991	1995	1998	1999	2000	2001	2002	2003	2004
Հայաստան									
Ընդամենը, հզ. տ.	275	428	440	414	290	364	374	508	576*
1 շնչի հաշվով, կգ	76	114	116	109	76	96	117	158	179.2
Ադրբեջան									
Ընդամենը, հզ. տ.	180	156	313	394	469	606	695	769	930.4**
1 շնչի հաշվով, կգ	25	20	39	49	58	75	85	93	112.6**
Վրաստան									
Ընդամենը, հզ. տ.	254	353	350	443	302	422	415	425	
1 շնչի հաշվով, կգ	47	71	74	94	65	91	91	93	

* - ՀՀ ԱՎԾ «ՀՀ սոցիալ-տնտեսական իրավիճակը 2004թ. հունվար-դեկտեմբերին»

** - The State Statistical Committee of Azerbaijan Republic, "**AZERBAIJAN IN FIGURES 2005**"

Աղյուսակ 6: Ցորենի արտադրություն

	1991	1995	1998	1999	2000	2001	2002	2003	2004
Հայաստան									
Ընդամենը, հզ. տ.	293	261	326	301	225	367	416	310	456
1 շնչի հաշվով, կգ	81	69	86	79	59	97	129	97	142.7
Ադրբեջան									
Ընդամենը, հզ. տ.	1291	882	926	1075	1509	1970	2148	2011	2106**
1 շնչի հաշվով, կգ	178	115	117	135	187	243	263	244	254.8**
Վրաստան									
Ընդամենը, հզ. տ.	574	516	598	781	421	714	672	754	
1 շնչի հաշվով, կգ	105	103	126	166	90	155	147	165	

* - ՀՀ ԱՎԾ «ՀՀ սոցիալ-տնտեսական իրավիճակը 2004թ. հունվար-դեկտեմբերին»

** - The State Statistical Committee of Azerbaijan Republic, "**AZERBAIJAN IN FIGURES 2005**"

ՀԱՄԱԽԱՌՆ ՊԱՀԱՆՋԱՐԿ:

Բոլոր երեք հանրապետություններում սպառման կշիռը ՀՆԱ-ում դրսևորում է նվազման միտում: Ադրբեջանում և Վրաստանում 1998-2004 թվականների ընթացքում սպառումը զիջել է ՀՆԱ-ին այն դեպքում, երբ Հայաստանում 1998-2001 թվականներին սպառումը գերազանցել է ՀՆԱ-ի մակարդակը: Ներկայումս նույնպես Հայաստանում սպառում/ՀՆԱ հարեբերությունը շարունակում է գերազանցել մյուս երկրների նույն ցուցանիշները (տես աղյուսակ 7): Զուտ արտահանումը երեք երկրներում էլ բացասական է և տատանվում է 15-20 տոկոսի շրջանակներում: Ընդ որում Ադրբեջանում զուտ արտահանման բացասական հաշվեկշիռը որոշակիորեն պայմանավորված է հայտնի նավթային ծրագրերի շրջանակներում ներմուծվող ներդրումային ապրանքներով:

Աղյուսակ 7: ՀՆԱ-ի կառուցվածքը ըստ պահանջարկի տարրերի, 1998-2004 թվականներին

	1998	1999	2000	2001	2002	2003	2004*
Վերջնական սպառում, այդ թվում							
Հայաստան	111.1	108.3	108.9	104.8	99.1	94.3	95.6
Ադրբեջան	95.2	91.4	79.6	75.1	75.3	72.4	67.8
Վրաստան	95.2	91.8	98.9	93.3	92.8	87.3	
Համախառն կուտակում, այդ թվում							
Հայաստան	19.1	18.4	18.6	19.8	21.7	24.7	23.9
Ադրբեջան	33.4	26.5	20.7	20.7	34.6	53.1	54.4
Վրաստան	21.0	22.1	21.7	21.9	22.1	24.4	
Զուտ արտահանում							
Հայաստան	-33.8	-29.0	-27.2	-20.7	-17.2	-17.9	-15.2
Ադրբեջան	-31.8	-13.9	1.8	4.2	-7.3	-23.5	-19.1

Վրաստան	-20.6	-19.1	-16.7	-14.5	-12.5	-14.5	
Վիճ. շեղում							
Հայաստան	3.5	2.4	-0.4	-3.9	-3.5	-1.1	-4.3
Ադրբեջան	3.3	-4.0	-2.0	0.0	-2.6	-2	-3.1
Վրաստան	4.4	5.2	-3.8	-0.8	-2.4	2.8	
ՀՆԱ	**100**	**100**	**100**	**100**	**100**	**100**	**100**

* - ՀՀ ԱՎԾ «ՀՀ սոցիալ-տնտեսական իրավիճակը 2004թ. հունվար-դեկտեմբերին»

* - The State Statistical Committee of Azerbaijan Republic, "**AZERBAIJAN IN FIGURES 2005**"

Ինչ վերաբերվում է ՀՆԱ-ում ներդրումների կշռին, ապա Հայաստանում և Վրաստանում այն դրսևորում է համեմատաբար դանդաղ աճի միտում և կազմում մոտ 24 տոկոս: Այն դեպքում, երբ Ադրբեջանում վերջին երեք տարիներին արձանագրվում ներդրումների էական աճ, որի արդյունքում 2004 թվականի դրությամբ ներդրումների կշիռը ՀՆԱ-ում կազմում է 54.4 տոկոս:

Ընդ որում, Ադրբեջանը շարունակաբար ներդրումների գերակշիռ մասը, մոտ 80 տոկոսը իրականացնում է արդյունաբերությունում: Հայաստանում և Վրաստանում արդյունաբերության ոլորտում կատարվում են ներդրումների համապատասխանաբար 5 տոկոսը և 6 տոկոսը: Հայաստանի և Վրաստանի տնտեսվարող սուբյեկտները ներդրումների գերակշիռ մասը կատարում են ծառայություններում (տես աղյուսակ 8): Մասնավորվապես, Հայաստանում ծառայությունների ոլորտ ուղղվող ներդրումների մեծամասնությունը բաժին է ընկնում բնակարանային տնտեսության, տրանսպորտի և կապի ոլորտներին:

Աղյուսակ 8: Հիմնական կապիտալի մեջ ներդրումները ըստ տնտեսության ճյուղերի, տոկոսներ

	1991	1992	1993	1994	1995	1996	1997	1998	1999	2000	2001	2002	2003
Ամբողջ տնտեսությունը	**100**	**100**	**100**	**100**	**100**	**100**	**100**	**100**	**100**	**100**	**100**	**100**	**100**
Արդյունաբերություն													
Հայաստան	19	25	20	22	28	24	17	12	9	10	15	4	5
Ադրբեջան	36	37	39	79	46	72	71	75	62	68	71	76	80
Վրաստան	24	19	11	8	46	32	30	28	20	15	25	11	6
Գյուղատնտես.													
Հայաստան	9	7	3	2	8	4	4	8	13	7	5	4	3
Ադրբեջան	15	6	5	1	2	1	1	1	1	1	1	1	1
Վրաստան	6	3	1	0	0	0	0	0	2	0	0	0	0
Շինարարություն													
Հայաստան	5	3	1	0	0	0	0	0	0	0	0	0	0
Ադրբեջան	3	1	1	0	0	0	1	1	1	0	1	2	0
Վրաստան	1	2	1	0	6	5	3	4	1	1	19	22	15
Ծառայություններ													

Հայաստան	67	65	77	76	64	72	79	80	78	83	80	92	92
Ադրբեջան	46	56	55	20	52	27	28	23	36	31	27	21	19
Վրաստան	69	76	87	92	48	63	67	68	77	84	56	67	79

ԳՆԵՐ:

1997-2004 թվականների ընթացքում սպառողական գների ամենամեծ աճը արձանագրվել է Վրաստանում՝ 58 տոկոս: Ընդ որում, Վրաստանում գրեթե հավասարապես աճել են պարենային, ոչ պարենային ապրանքների և ծառայությունների գները (տես աղյուսակ 9): Նույն ժամանակահատվածում գնաճի ամենացածր ցուցանիշը արձանագրվել է Ադրբեջանում՝ 8.8 տոկոս, որը հիմնականում տեղի է ունեցել պարենային ապրանքների հաշվին: Հատկանշական է, որ նախորդ չորս տարիներին Ադրբեջանում արձանագրվում է ծառայությունների գների նվազում: Հայաստանում պատկերը հետևյալն է. սպառողական գներն անցած ութ տարիներին աճել են 18.5 տոկոսով հիմնականում ծառայությունների հաշվին, որը գլխավորապես տեղի է ունեցել 1998-1999 թվականներին: Վերջին չորս տարիներին գնաճը հիմնականում տեղի է ունենում պարենային ապրանքների, մասնավորապես գյուղատնտեսական մթերքների գների աճի հաշվին:

Աղյուսակ 9: Սպառողական գների ինդեքս, տոկոսներով 1997 թվականի նկատմամբ

	1997	1998	1999	2000	2001	2002	2003	2004*
Հայաստան								
Ընդամենը	100	98.7	100.7	101.1	104.0	106.1	115.2	118.5
Պարենային	100	95.7	94.2	94.0	97.8	99.7	112.1	115.2
Ոչ պարենային	100	100.9	103.8	105.5	104.7	107.6	108.0	108.0
Ծառայություններ	100	106.5	122.7	125.0	125.8	127.7	130.3	131.0
Ադրբեջան								
Ընդամենը	100	92.4	91.9	94.0	95.2	98.3	101.9	108.8
Պարենային	100	91.0	89.2	92.7	94.4	98.9	104.3	114.5
Ոչ պարենային	100	97.0	96.9	98.6	99.8	101.5	102.5	104.0
Ծառայություններ	100	99.4	105.5	100.8	100.2	100.1	99.8	100.6
Վրաստան								
Ընդամենը	100	110.7	122.8	128.4	132.8	139.9	149.7	158.1
Պարենային	100	109.9	117.0	125.8	130.5	141.0	154.3	
Ոչ պարենային	100	114.1	135.1	134.0	134.8	135.0	141.8	
Ծառայություններ	100	109.5	130.5	133.0	139.9	144.0	143.8	

* - ՀՀ ԱՎԾ «ՀՀ սոցիալ-տնտեսական իրավիճակը 2004թ. հունվար-դեկտեմբերին»

- The State Statistical Committee of Azerbaijan Republic, "**AZERBAIJAN IN FIGURES 2005**"

- "Georgia: Poverty Reduction Strategy Paper Progress Report", IMF, March 2005

2005 թվականի համար Ադրբեջանում և Վրաստանում Արժույթի միջազգային հիմնադրամի մասնագետների կողմից կանխատեսվում է համապատասխանաբար 7.6 և 6.8 տոկոս միջին տարեկան գնաճ: Համեմատության համար նշենք, որ 2005 թվականի ՀՀ ԿԲ դրամավարկային ծրագով նախատեսվում 2 տոկոս միջին տարեկան գնաճ:

ԱՇԽԱՏԱՎԱՐՁԵՐ և ԳՈՐԾԱԶՐԿՈՒԹՅՈՒՆ:


Համաձայն պաշտոնապես գրացված գործազուրկների 2003 թվականի դրությամբ գործազրկությունը Հայաստանում կազմել է 9.8 տոկոս իսկ Ադրբեջանում 1.4 տոկոս: Հասկանալի է որ այս տեղեկատվությունը չի արտահայտում գործազրկության իրական պատկերը (տես աղյուսակ 10):

Աղյուսակ 10: Գործազրկություն մակարդակ

	1992	2000	2003	2004
Հայաստան	3.4	10.9	9.8	
Ադրբեջան	0.2	1.2	1.4	
Վրաստան	-	-	-	

Վերջին հինգ տարիներին Ադրբեջանում արձանագրվում է աշխատավարձերի նշանակալի աճ: 2003 թվականի դրությամբ իրական աշխատավարձերը կազմում են 1991 թվականի 88 տոկոսը: Հայաստանում այդ ցուցանիշը հավասար է 55 տոկոսի (տես նկար 4):

Նկար 4: Միջին ամսական իրական աշխատավարձի ինդեքսները 1991 թվականի նկատմամբ*



* - Վրաստանի համար համապատասխան տվյալները բացակայում են

Դոլարային արտահայտությամբ միջին ամսեկան աշխատավարձերը Հայաստանում ևս ցածր են Ադրբեջանի համեմատ (տես աղյուսակ 11):

Աղյուսակ 11: Միջին ամսական անվանական աշխատավարձը, ԱՄՆ դոլար

	1994	1995	1996	1997	1998	1999	2000	2001	2002	2003	2004
Հայաստան	5.9	14.6	20.8	24.22	35.7	37.7	42.1	44.1	47.7	58.6	78.7
Ադրբեջան	13.1	14.1	20.8	35.5	43.5	44.8	49.5	55.8	64.9	78.8	
Վրաստան	5.6	10.5	23	32.8	39.8	33.4	36.5	45.6	51.7	-	-

Հարկաբյուջետային հատված

Հայաստանի հետ նշված երկրներում վարվող հարկաբյուջետային քաղաքականության միտումների ընդհանուր համեմատականը ցույց է տալիս, որ մասնավորապես հարկային եկամուտներ/ՀՆԱ ցուցանիշի գծով 1998-2003 թվականներին առաջատար է եղել Հայաստանը: Այսպես, հարկային եկամուտներ ՀՆԱ ցուցանիշի միջին մակարդակը 1998-2003թթ. կազմել է՝ Հայաստանում՝ 17.7 %, Ադրբեջանում՝ 15.2% և Վրաստանում՝ 13.9%: Հարկերի աճի տեմպի մեծությամբ նշված երկրների շարքում առաջատար է եղել Ադրբեջանը, որտեղ 1998-2003 թվականներին աճի միջին տեմպը կազմել է 16.4%: Հայաստանում այն կազմել է 13.6% և Վրաստանում 13.1%: 2004 թվականին այս պատկերն էականորեն փոխվել է և նշված երկու ցուցանիշների գծով առաջատար դիրքում է հայտնվել Վրաստանը: Հարկեր/ՀՆԱ ցուցանիշը 2004 թվականին այնտեղ կազմել է 19.7%՝ Հայաստանի 17.2% և Ադրբեջանի մոտ 16%-ի դիմաց: Հարկերի աճի տեմպը Վրաստանում կազմել է մոտ 62%՝ Հայաստանում արձանագրված 17.7%-ի և Ադրբեջանում՝ 21.3%-ի համեմատ: Որպես ընդհանուր միտում կարելի է առանձնացնել նաև հարկաբյուջետային քաղաքականության սեղմողական ուղղվածությունը Հայաստանում և Վրաստանում, որն արտահատվել է բյուջեի պակասուրդի կրճատմամբ մինչև 1-2 տոկոս, ինչը չի կարելի ասել Ադրբեջանի մասին, որտեղ բյուջեի ոչ նավթային բացասական հաշվեկշիռը վերջին տարիներին դեռևս 10 տոկոսի շրջանակներում է գտնվել՝ չնայած նրան որ ընդհանուր հաշվեկշռի դրական մնացորդը աճի միտում ունի՝ ի հաշիվ նավթային մուտքերի:

Հայաստան, Աղրբեջան, Վրաստան: Համախմբված բյուջեներ

Հայաստան*										
տոկոս ՀՆԱ-ում	1995	1996	1997	1998	1999	2000	2001	2002	2003	2004
Ընդհանուր եկամուտներ և գրանտներ	19.9	17.6	19.7	20.7	21.9	19.8	20.0	19.7	18.5	19.1
հարկային եկամուտներ	12.7	12.9	16.3	17.0	19.3	18.0	17.7	17.5	17.0	17.2
հարկային եկամուտների աճը (%)		28.0	53.7	24.2	17.2	-2.6	12.1	14.6	16.3	17.7
ոչ հարկային եկամուտներ	3.5	3.2	2.0	2.8	1.6	1.1	1.4	1.0	0.8	1.0
գրանտներ	3.6	1.5	1.4	0.9	1.0	0.8	1.0	1.2	0.6	0.9
Ընդհանուր ծախսեր	28.8	26.2	25.5	24.9	27.9	25.0	23.6	22.3	20.2	20.9
Պակասուրդ	-8.9	-8.7	-5.8	-4.3	-6.0	-5.1	-3.5	-2.6	-1.8	-1.7

* ներառված չեն Լինսի հիմնադրամի դրամաշնորհները

Աղրբեջան										
տոկոս ՀՆԱ-ում	1995	1996	1997	1998	1999	2000	2001	2002	2003	2004*
Ընդհանուր եկամուտներ և գրանտներ	18.0	14.4	15.2	18.3	18.5	21.2	18.7	27.3	27.1	27.3
Ընդամենը եկամուտներ	18.0	13.8	14.9	17.9	18.1	20.7	18.6	27.1	27.0	27.2
հարկային եկամուտներ	17.9	13.1	14.2	16.9	14.2	14.5	14.6	15.1	15.7	15.9
հարկային եկամուտների աճը (%)		-6.4	24.8	29.8	8.0	9.1	13.4	17.9	20.0	21.3
նավթային եկամուտներ					4.2	7.5	6.7	15.1	15.2	
ոչ նավթային եկամուտներ					14.0	13.2	11.9	12.0	11.8	
Ոչ նավթային եկամուտներ (% ոչ նավթային ՀՆԱ-ում)					17.5	18.8	17.5	17.4	17.2	
Ընդհանուր ծախսեր	23.1	17.3	17.4	21.9	23.6	20.8	18.7	27.7	28.9	26.5
Կանխիկ հաշվեկշիռ (+ =ավելցուկ)	-5.1	-3.0	-2.2	-3.6	-1.4	3.4	2.1	5.2	4.4	
Ոչ նավթային հաշվեկշիռ					-8.9	-8.1	-7.1	-10.3	-11.0	-9.8

* նախնական փաստացի ցուցանիշներ

Վրաստան										
տոկոս ՀՆԱ-ում				1998	1999	2000	2001	2002	2003	2004
Ընդհանուր եկամուտներ և գրանտներ				15.3	15.5	15.3	16.3	15.5	15.4	25.2
հարկային եկամուտներ				12.8	13.9	14.2	14.4	14.1	13.9	19.7
հարկային եկամուտների աճը (%)					22.4	8.2	11.8	10.5	12.5	62.4
ոչ հարկային եկամուտներ				1.9	0.7	0.8	1.2	1.1	1.0	1.0
գրանտներ				0.6	0.9	0.2	0.7	0.3	0.6	4.5
Ընդհանուր ծախսեր				20.2	21.0	18.7	18.6	18.9	18.8	26.7
Պակասուրդ				-4.9	-5.5	-3.4	-2.3	-3.4	-3.4	-1.5

2004 թվականին Վրաստանում իրականացված հարկաբյուջետային քաղաքականությունը տպավորիչ արդյունքների է հանգեցրել: 2004 թվականին Վրաստանում եկամուտների հավաքագրման աննախադեպ բարձր մակարդակը պայմանավորվել է արդյունավետ հարկային վարչարարությամբ: Արդյունքում երկու անգամ տեղի է ունեցել օրենքով նախատեսված ծախսերի մակարդակների փոփոխություն՝ ավելացման ուղղությամբ, ինչպես նաև սպասվածից ավելի կարճ ժամանակահատվածում մարվել են ծախսերի գծով կուտակված ներքին պարտավորությունները: 2005 թվականի հարկաբյուջետային հատվածի հիմնական խնդիրներից է վերջերս Վրաստանում պետական ձեռնարկությունների մասնավորեցումից խոշորածավալ մուտքերի օգտագործման ուղղությունների որոշումը: Խնդիր է նաև այս լրացուցիչ միջոցների ծախսման հարթ կլանումը: Այս միջոցների օգտագործման հատուկ լրացուցչ բյուջե է ներկայացվելու պառլամենտին: Արդյունքում նաատեսվում է , որ 2005 թվականին բյուջեի կանխիկ դեֆիցիտը կկազմի մոտ 5.7 տոկոս ՀՆԱ-ում:

2004 թվականին Աղրբեջանի հարկաբյուջետային քաղաքականությունը ավելի զսպողական էր, ի տարբերություն 2003 թվականի, պայմանավորված ծրագրվածի նկատմամբ փաստացի ծախսերի ցածր մակարդակով, և հարկային եկամուտների բարձր կատարողականով: Վերջինս հարկային քաղաքականության բնագավառում իրականացված բարեփոխումների և հարկային քաղաքականության փոփոխությունների արդյունք է: Հատկանշական է, որ վերջին տարիների բյուջեների եկամուտներում նկատվում է նավթային մուտքերի աճ (2002 և 2003 թվականներին կազմել ՀՆԱ-ի 15.2 %), որը ըստ կանխատեսումների ապագայում կունենա ավելացման միտում, ուստի կառավարության կողմից մշակվել է նավթային միջոցների օգտագործման երկարաժամկետ ռազմավարություն: Ըստ որի նավթային միջոցները հիմնականում կուղղվեն աղքատության կրճատմանը, տնտեսության ոչ-նավթային հատվածներում աճի խթանմանը, և ռեգիոնալ զարգացման ծրագրերի ապահովմանը: Նավթային միջոցների օգտագործման երկարաժամկետ ռազմավարությունը և հիմքում ընկած գերակայությունները հիմք են հանդիսացել 2005 թվականի պետական բյուջեի կազմմանը:

Աղրբեջանի ոչ նավթային բացասական հաշվեկշիռը (ոչ նավթային ՀՆԱ-ում) 2004 թվականին ավելի ցածր էր նախորդ տարվա և կանխատեսված մակարդակի նկատմամբ: Իսկ 2005 թվականին նախատեսվում է այդ ցուցանիշի 16.8% մակարդակ, որը 2004 թվականի ծրագրվածի նկատմամբ ավելի է 2.4 տոկոսային կետով, իսկ մինչև 2008 թվականը՝ կավելանա տարեկան 1 տոկոսային կետով:

2005 թվականին ակնկալվում է հարկային եկամուտների աճ, որը նախատեսվում է պետական հատվածի ձեռնարկությունների համար նախորդ տարիներին սահմանված և գործող նվազագույն հարկային վճարները սովորական կարգով վճարվող հարկերով փոխարինմամբ:

Արտաքին հատված

Ընթացիկ Հաշիվ

Հայաստան

Հայաստան	*1996*	*1997*	*1998*	*1999*	*2000*	*2001*	*2002*	*2003*	*2004*
Ընթացիկ հաշիվ/ՀՆԱ	-18.3	-18.9	-21.3	-16.6	-14.6	-9.3	-6.2	-6.8	-4.6
Առևտրային հաշիվ/ՀՆԱ	-29.3	-34.1	-30.5	-25.7	-24.2	-19.8	-15.5	-15.5	-13.1
Ներմուծում/ՀՆԱ	-47,8	-48,9	-42,7	-39,0	-40,7	-36,0	-37,2	-40,1	-33,0
Արտահանում/ՀՆԱ	18,3	14,4	12,1	13,4	16,3	16,4	21,6	24,7	20,2
Ծառայությունների հաշվեկշիռ/ՀՆԱ	-3,2	-3,8	-3,3	-3,4	-2,9	-0,8	-1,7	-2,4	-2,1
Մասնավոր Տրանսֆերտներ/ՀՆԱ	4,2	4,1	3,4	4,4	4,5	4,8	5,0	5,6	7,6

Հայաստանի ընթացիկ հաշիվը 1995-2004թթ-երին եղել է պակասուրդով՝ պայմանավորված հիմնականում ապրանքների և ծառայությունների զգալի ներմուծումով: Սկսած 1998թ-ից ընթացիկ հաշվի պակասուրդն ունեցել է նվազման միտում, ինչը պայմանավորված է եղել երեք գործոններով. արտահանման աճի, ներմուծման նվազման՝ ի հաշիվ ներմուծման փոխարինիչների ներքին արտադրության և մասնավոր հատվածի տրանսֆերտների տեմպերի արագացման:

2004թ-ին ընթացիկ հաշիվը բարելավվել է և՛ դոլարային արտահայտությամբ, և՛ ՀՆԱ-ում տեսակարար կշռով: Ընթացիկ հաշվի պակասուրդը 2004թ.-ին կազմել է 144 մլն ԱՄՆ դոլար, նախորդ տարվա 191 մլն ԱՄՆ դոլարի դիմաց, իսկ ընթացիկ հաշիվ/ՀՆԱ ցուցանիշը նախորդ տարվա համեմատ կրճատվել է 2.2 տոկոսային կետով և կազմել շուրջ 4.6%:

Հայաստանը առևտուր է անում 108 երկրների հետ: 2004թ-ին ՀՀ-ի արտահանումը աճել է 4.9%-ով, իսկ ներմուծումը 6%-ով և կազմել համապատասխանաբար 730 և 1195 մլն ԱՄՆ դոլար: Եվ արտահանման և ներմուծման կառուցվածքում ամենամեծ տեսակարար կշիռն ունի « Թանկարժեք ու կիսաթանկարժեք քարեր, թանկարժեք մետաղներ և դրանցից իրեր» ապրանքախումբը (ադամանդն ու ոսկին), որոնք կազմում են համապատասխանաբար ընդհանուր ներմուծման և արտահանման 40.5% և 26.8%-ները:

Արտահանման աշխարհագրական կառուցվածքում զգալի կշիռ ունեն Եվրոմիության անդամ երկրները՝ 36.3% (այդ թվում՝ Բելգիան 15.1%) , ԱՊՀ երկրները՝

17.4% (այդ թվում՝ Ռուսաստանը 10.9%), Իսրայելը՝ 13.8%, ԱՄՆ՝ 9.9% և այլ երկրները՝ 22.6%: Ներմուծման աշխարհագրական կառուցվածքում նույնպես առաջատար տեղ են գրավում ԵՄ երկրները՝ 32.7%, ԱՊՀ երկրները՝ 22.9% (այդ թվում Ռուսաստանի կշիռը՝ 13.9%), Իսրայել՝ 7.4%, Իրանը՝ 5.4%, ԱՄԷ՝ 4.5% և այլ երկրները՝ 27.1%:

Աղյուսակ2 Արտահանման և ներմուծման կառուցվածքն ըստ ապրանքատեսակների

Հայաստան			
Արտահանման Ապրանքախմբեր	Արտահանում	Ներմուծում	Ներմուծման Ապրանքախմբեր
Թանկարժեք և կիսաթանկարժեք քարեր, թանկարժեք մետաղներ և դրանցից իրեր	41,9%	22,0%	Թանկարժեք և կիսաթանկարժեք քարեր, թանկարժեք մետաղներ և դրանցից իրեր
Ոչ թանկարժեք մետաղներ և դրանցից պատրաստված իրեր	19,3%	15,8%	Հանքահումքային մթերքներ
Հանքահումքային արտադրանք	11,6%	9,9%	Մեքենաներ, սարքավորումներ և մեխանիզմներ
Պատրաստի սննդի արտադրանք	9,7%	8,3%	Պատրաստի սննդի արտադրանք
Մանածագործական իրեր	6,1%	7,9%	Բուսական ծագման արտադրանք
Մեքենաներ, սարքավորումներ և մեխանիզմներ	3,0%	6,9%	Վերգետնյա, օդային և ջրային տրանսպորտի միջոցներ
Վերգետնյա, օդային և ջրային տրանսպորտի միջոցներ	1,2%	6,2%	Քիմիա և նրա հետ կապված արդյունաբերության ճյուղերի արտադրանք
Սարքեր և ապարատներ	2,2%	4,4%	Ոչ թանկարժեք մետաղներ և դրանցից իրեր
ԱՅԼ	4,9%	18,6%	ԱՅԼ

Աղբեջան

Աղբեջան	*1996*	*1997*	*1998*	*1999*	*2000*	*2001*	*2002*	*2003*	*2004*
Ընթացիկ հաշիվ/ՀՆԱ	*-29.3*	*-23.1*	*-30.7*	*-13.1*	*-3.2*	*-0.9*	*-12.6*	*-28.3*	*-30.4*
Առևտրային հաշիվ/ՀՆԱ	*-21.8*	*-14.3*	*-25.0*	*-10.2*	*6.1*	*10.7*	*7.9*	*-1.4*	*1.9*
Ներմուծում/ՀՆԱ	*-42.1*	*-34.7*	*-38.8*	*-31.3*	*-29.2*	*-25.7*	*-29.2*	*-38.1*	*-42.0*
Արտահանում/ՀՆԱ	*20.3*	*20.4*	*15.2*	*22.4*	*35.2*	*36.4*	*37.0*	*36.8*	*43.9*

Ծառայությունների հաշվեկշիռ/ՀՆԱ	*-9.2*	*-9.7*	*-8.3*	*-5.0*	*-4.3*	*-6.6*	*-15.0*	*-22.6*	*-26.3*
Տրանսֆերտներ/ՀՆԱ	*2,1*	*1,1*	*1,5*	*2,0*	*1,4*	*1,3*	*1,2*	*1,9*	*2,1*

Ընթացիկ հաշիվը 1996-2004թթ.-երին եղել է պակասուրդով՝ պայմանավորված ծառայությունների և եկամուտների հաշվեկշիռների պակասուրդներով: Ընդ որում, սկսած 1998թ-ից մինչ 2001թ-ը ընթացիկ հաշվի պակասուրդն ունեցել է նվազման միտում՝ ի հաշիվ ներմուծման նկատմամբ արտահանման առաջանցիկ աճի տեմպերի: Ապա 2001թ-ից նորից նկատվել է ընթացիկ հաշվի պակասուրդի խորացում՝ պայմանավորված տնտեսության նավթարդյունահանման և վերամշակման հատվածում խոշոր ներդրումների հետևանքով ապրանքների և ծառայությունների զգալի ներմուծման աճերի:

2004թ-ին առևտրային հաշվեկշռի 2003թ.-ի պակասուրդը նորից վերածվել է հավելուրդի և կազմել է 161.3 մլն դոլար: Ծառայությունների հաշվեկշռի և եկամուտների հաշվեկշռի պակասուրդները խորացել են (կազմել են համապատասխանաբար ՀՆԱ-ի 26.3% և 8.2%), հանգեցնելով ընթացիկ հաշվի պակասուրդի խորացմանը: Արդյունքում՝ Ադրբեջանի ընթացիկ հաշվի պակասուրդը 2004թ-ին կազմել է ՀՆԱ-ի 30.4%-ը՝ 2003թ.-ի 27.8 %-ի համեմատ: Այդ պակասուրդը գրեթե ամբողջովին ֆինանսավորվում է նավթային հատվածի ներդրումներով:

Աղյուսակ3 Արտահանման և ներմուծման կառուցվածքն ըստ ապրանքատեսակների (2003թ.)

Ադրբեջան			
Արտահանման Ապրանքախմբեր	Արտահանում	Ներմուծում	Ներմուծման Ապրանքախմբեր
Բենզին և նավթամթերք	86.01	18.7	Կաթսաներ մեքենասարքավո-րումներ և այլ պարագաներ
Կաթսաներ մեքենասարքավո-րումներ և այլ պարագաներ	1.03	17.39	Երկաթյա և պողպատե պարագաներ
Երկաթյա և պողպատե պարագաներ	1.01	11.27	Հանքային վառելիք, հանքային նավթ
		7.44	Նավեր, նավակներ և այլ լողացող տրանսպորտ
Էլեկտրասարքավորումներ, դրանց կցամասեր	0.24	7.38	Էլեկտրասարքավորումներ, դրանց կցամասեր
Տրանսպորտային միջոցներ	0.14	4.4	Ցորեն
		4.3	Տրանսպորտային միջոցներ
		18.7	Հում երկաթ և պողպատ
ԱՅԼ	11.6	10.4	ԱՅԼ

Ադրբեջանը առևտրային գործարքներ է իրականացնում աշխարհի 118 երկրների հետ: 2004թ.-ին ապրանքների արտահանումը կազմել է 3.7 մլրդ և ներմուծումը՝ 3.6 մլրդ դոլար: Ընդ որում, նախորդ տարվա համեմատ, արտահանումն աճել է 42.6 և ներմուծումը 31.6%-ով: 2005թ.-ի առաջին եռամսյակի տվյալներով վառելիքը կազմում է Ադրբեջանի արտահանման ծավալների շուրջ 75%-ը, այդ թվում՝ հում նավթը 42.5%-ը և նավթամթերքները՝ 31.4%-ը: Արտահանվող մյուս ապրանքատեսակներն են՝ 3.8% քիմիական արդյունաբերության արտադրանքը, 3% բուսական և կենդանական յուղը, 2.6%-ը՝ ալյումինը և դրանից պատրաստված իրերը, 2.5% սև մետաղները և դրանից պատրաստված իրերը, 2.1% մրգերն ու բանջարեղենը, 1.5% բամբակը, 0.7% ծխախոտ, 0.2% ալկոհոլային և ոչ ալկոհոլային խմիչքները և այլն: Ադրբեջանի ներմուծման 50.8%-ը կազմել են մեքենաներն ու էլեկտրասարքավորումները, էլեկտրատեխնիկական հարմարանքները և դրանց պահեստամասերը: Ներմուծման 9.1%-ը կազմում են սև մետաղները և դրանից պատրաստված իրերը, 7.1%-ը՝ սննդամթերքները, 6.8%-գազը և այլ ածխաջրերը, 5.4%-ը՝ տրանսպորտային միջոցներն ու դրանց պահեստամասերը, 0.8%-ը՝ կահույքը և այլ ապրանքներ:

Ադրբեջանի ներմուծման կառուցվածքում ամենամեծ կշիռ ունի Ռուսաստանը (14.1%), և այնուհետև՝ Մեծ Բրիտանիան (11.7%), Ղազախստանը (9.3%), Թուրքիան (6.3%), Գերմանիան (5.3%), Ուկրաինան (4.7%), Չինաստանը (4.3%), Ճապոնիան (3.9%), Մալազիան (3.9%), ԱՄՆ-ը (3.6%) և այլն: Արտահանման կառուցվածքում գերակշիռ դեր ունի Իտալիան (41.4%) և այնուհետև՝ Թուրքմենստանը (7.2%), Իսրայելը (5.9%), Ռուսաստանը (5.8%), Թուրքիան (5.4%), Վրաստանը (5.4%), Իրանը (4.8%), Ֆրանսիան (3.25%), Ինդոնեզիան (3.04%), Խորվաթիան (2.55%) և այլն:

Վրաստան

Վրաստան	*1997*	*1998*	*1999*	*2000*	*2001*	*2002*	*2003*	*2004*
Ընթացիկ հաշիվ/ՀՆԱ	-14.7	-7.6	-7.1	-8.8	-6.6	-6.5	-9.5	-6.8
Առևտրային հաշիվ/ՀՆԱ	-22.0	-19.1	-19.0	-16.8	-17.1	-14.2	-15.9	-17.9
Ներմուծում/ՀՆԱ	-32.6	-27.4	-30.8	-31.9	-32.6	-32.0	-36.8	-39.6
Արտահանում/ՀՆԱ	10.6	8.3	11.7	15.1	15.5	17.7	20.9	21.4
Ծառայությունների հաշվեկշիռ/ՀՆԱ	-1.4	0.5	-0.3	-0.3	2.4	1.1	1.4	1.1
Տրանսֆերտներ/ՀՆԱ	5.5	5.7	6.9	4.4	7.1	5.5	4.2	9.1

Ինչպես Հայաստանում և Ադրբեջանում, Վրաստանի ընթացիկ հաշիվը նույնպես մշտապես եղել է պակասուրդով: Ընդ որում, վերջինս ունեցել է բավականին տատանողական վարքագիծ: Պետք է նշել, որ ընթացիկ հաշվի կառուցվածքով այն ավելի մոտ է կանգնած Հայաստանին. հիմնական հոդվածը առևտրային հաշվեկշիռն է, որը 1997-

2004թ.-ին միջին հաշվով կազմել է 17.7% (Հայաստանինը՝ 22.3%): Զգալի կշիռ ունեն նաև տրանսֆերտները, որոնց միջին տարեկան ցուցանիշը 1997-2004թթ-ին կազմել է 6.0% (Հայաստանում՝ 4.9%):

2004թ.-ին թեև Վրաստանի ընթացիկ հաշիվ/ՀՆԱ ցուցանիշը նվազել է, սակայն ընթացիկ հաշվի հաշվեմնացորդն առանց տրանսֆերտների ավելի է վատթարացել և դեֆիցիտը կազմել է ՀՆԱ-ի 15.9%-ը՝ 2003թ.-ի 13.7%-ի համեմատ: Իսկ 2004թ.-ին առևտրային հաշվեկշռի դեֆիցիտի խորացման պատճառ են եղել Բաքու-Թբիլիսի-Ջեյհան նավթամուղի կառուցման հետ կապված ներմուծման ծավալների աճը:

2004թ.-ին առևտրային հաշվեկշռի 1198.3 մլն. ԱՄՆ դոլար դեֆիցիտը մասամբ ֆինանսավորվել է ծառայությունների հաշվեկշռի շուրջ 56 մլն., եկամուտների հաշվեկշռի՝ շուրջ 97 մլն ԱՄՆ դոլար հավելուրդներով և 415 մլն ԱՄՆ դոլար կազմող զուտ ընթացիկ տրանսֆերտներով Ի դեպ, նկատենք, որ 2004թ.-ին ընթացիկ տրանսֆերտների զուտ ներհոսքը աճել է 2.7 անգամ և կազմել է ՀՆԱ-ի 8.1%-ը նախորդ տարվա 4.0%-ի համեմատ: Արտասահմանում աշխատողների փոխանցումները Վրաստան աճել են 1.3 անգամ: Այդ փոխանցումների 36.7%-ը բաժին է ընկնում Ռուսաստանին, 10%-ը՝ ԱՄՆ-ին, 3%-ը՝ Հունաստանին, 2%՝ Գերմանիային և 1.9%՝ Թուրքիային:

Առևտրային հաշվեկշռի պակասուրդի հիմնական մասը ֆինանսավորվել է կապիտալի շարժի և ֆինանսական հաշվով գրանցված ներհոսքի հաշվին, որը 2004թ.-ին 2.0 անգամ գերազանցել է 2002թ.-ի մակարդակը և կազմել է 481 մլն. ԱՄՆ դոլար:

2004թ.-ին Վրաստանի հիմնական առևտրային-գործընկեր երկրներն են եղել (և՝ արտահանման, և՝ ներմուծման գծով) Ռուսաստանը, որին բաժին է ընկել Վրաստանի առևտրաշրջանառության ընդհանուր ծավալի 14.5%-ը, Թուրքիան՝ 12.9%-ը, Մեծ Բրիտանիան՝ 8.1%-ը, Ադրբեջանը՝ 7.3%-ը, Գերմանիան՝ 6.7%-ը, Ուկրաինան՝ 6.3%-ը, Թուրքմենստանը՝ 5.9%, ԱՄՆ՝ 5.3%-ը, Հայաստանը՝ 3.2%-ը, Իտալիան՝ 2.9%-ը և այլն: Առևտրային հաշվեկշիռը դրական է (արտահանումը գերազանցում է ներմուծմանը) միայն Թուրքմենստանի և Հայաստանի հետ, մյուս բոլոր առևտրային-գործընկեր երկրների հետ առևտրային հաշվեկշիռը պակասուրդով է:

2004թ.-ին արտահանման ծավալներն աճել են 39.4%-ով., ներմուծման ծավալները՝ 61.9%-ով, իսկ 2005թ.-ի հունվար-փետրվար ամիսներին՝ համապատասխանաբար 63.3% և 37%-ով: Արտահանվող ապրանքատեսակներն են՝ սև մետաղի ջարդոնը, պողպատե մետաղները, գինիները, պղնձի հանքաքարը և խտանյութը, չմշակված և կիսամշակված ոսկին, պարարտանյութերը: Վրաստանը ներմուծում է ավտոմեքենաներ, հիդրոկարբոն, դեղեր, խողովակներ, էլեկտրաէներգիա, այլ մեքենաներ և մեխանիկական հարմարանքներ: Նկատենք, որ Վրաստանը ներմուծում է նաև անմշակ նավթ, բենզին, շաքար և հացահատիկ, որոնց մի մասը արտահանում է այլ երկրներ, այդ թվում նաև Հայաստան:

Աղյուսակ 4 Արտահանման և ներմուծման կառուցվածքն ըստ ապրանքատեսակների

Վրաստան			
Արտահանման Ապրանքախմբեր	Արտահանում	Ներմուծում	Ներմուծման Ապրանքախմբեր
Սև մետաղյա թափոններ	14.8%	10,1%	Հում նավթ և այլ Նավթամթերք
Այլ օդային տրանսպորտ	12.9%	6.9%	Բենզին, գազ և այլ նավթամթերքներ
Գինիներ	7.5%	6.3%	Ավտոմեքենաներ
Սև մետաղներ	6.6%	5.1%	Էլեկտրաէներգիա
Շաքար	5.3%	4.7%	Դեղորայք
Պղնձի հանքաքար և կոնցետրատներ	4.9%	3.5%	Շաքարավազ
Ցորեն	3.5	1.5	Ալյուր
Հանքային Ջրեր	3.0%	1.3%	Այլ օդային տրանսպորտ
Ալկոհոլ և այլ սպիրտային խմիչքներ	2,9%	1.3%	Շոկոլադ և սննդի այլ պարագաներ, որոնք պարունակում են կակաո
ԱՅԼ	38.6%	59,3%	ԱՅԼ

Վրաստանի տարանցիկ փոխադրումների վճարումներից սպասվող եկամուտները

Վրաստանի աշխարհագրական դիրքը նրան լավ հնարավորություն է ընձեռում Կասպյան նավթն ու գազը Միջերկրական ծով տեղափոխելուց օգուտներ ստանալ: Վրաստանի տարածքով տրանսպորտային ճանապարհը բավական կարճ է, հետևաբար նաև մոտ երկու անգամ էժան: Բաքու-Թբիլիսի-Ջեյհան նավթամուղի շինարարության ավարտը նախատեսվում է 2005 թվականին, որը հանդիսանալու է աղրբեջանական նավթի արտահանման հիմնական ուղին: Այն հնարավորություն կտա մեծացնել նավթի արտադրության ծավալները շուրջ 10 անգամ՝ 2010 թվականին հասցնելով 1 մլն բարել/օր: Ընդ որում, ներկայիս կանխատեսումներով 2020 թվականներին աղրբեջանական նավթի արտադրության ծավալները կրճատվելու են կիսով չափ, այդ ժամանակ նավթամուղի օգտագործման այլընտրանք կարող է լինել ղազախական նավթը: Բացի այդ կառուցվում է նաև Հարավ Կովկասյան նավթամուղը, որը նախատեսվում է ավարտել 2007 թվականին:

Ü»ñÏ³ÛáõÙë ìñ³ëï³ÝÇ ï³ñ³Íùáí ³ÝóÝáÕ ´³ùáõ-êáõ÷ë³ Ý³íÃ³ÙáõÕÇ ï³ñ³ÝóÇÏ ÷áË³¹ñáõÙÝ»ñÇ í×³ñÁ Ï³½ÙáõÙ ¿ 0.19$ Ù»Ï µ³ñ»É Ý³íÃÇ ¹ÇÙ³ó: 2004 Ãí³Ï³ÝÇÝ ìñ³ëï³ÝÇ »ÏáõÙáõïÝ»ñÁ Ýßí³Í Ý³íÃ³ÙáõÕÇó Ï³½Ù»É »Ý 8.7 ÙÉÝ ²ØÜ ¹áÉ³ñ (ÐÜ²-Ç 0.2 ïáÏáë):

Àëï Ï³ÝË³ï»ëáõÙÝ»ñÇ, Ý³íÃ³ÙáõÕ»ñÇ ï³ñ³ÝóÇÏ ÷áË³¹ñáõÙÝ»ñÇ ¹ÇÙ³ó í×³ñÝ»ñÇó, ìñ³ëï³ÝÇ ëå³ëíáÕ »Ï³ÙáõïÝ»ñÁ ÏÏ³½Ù»Ý Ùáï 81 ÙÉÝ ²ØÜ ¹áÉ³ñ 2010 Ãí³Ï³ÝÇÝ (ÐÜ²-Ç Ùáï 1 ïáÏáëÁ), »Ã» ¹ñ³Ýù û·ï³·áñÍí»Ý ³ÙµáÕç Ñ½áñáõÃÛ³Ùµ: ²ÛëÇÝùÝ ëå³ëíáÕ »Ï³ÙáõïÝ»ñÁ ï³ñ³ÝóÇÏ »ñÏñáõÙ` ìñ³ëï³ÝáõÙ »Ï³ÙáõïÝ»ñÁ ÝáõÛÝ ÑëÏ³Û³Ï³Ý Ýß³Ý³ÏáõÃÛáõÝÁ ã»Ý áõÝ»Ý³, ÇÝãå»ë ³ë»Ýù ³ñï³Ñ³ÝáÕ »ñÏñáõÙ` ²¹ñµ»ç³ÝáõÙ, áñï»Õ Ý³íÃÇ ³ñï³Ñ³ÝáõÙÇó ëï³óíáÕ »Ï³ÙáõïÝ»ñÁ Ï³½ÙáõÙ »Ý å»ï³Ï³Ý »Ï³ÙáõïÝ»ñÇ ·ñ»Ã» 50 ïáÏáëÁ:

Կապիտալ Հաշիվ

Հայաստան

Հայաստան	*1996*	*1997*	*1998*	*1999*	*2000*	*2001*	*2002*	*2003*	*2004*
Կապիտալ և Ֆինանսական հաշիվ/ՀՆԱ	17,6	21,1	21,3	16,2	15,5	9,5	9,3	8,4	5,8
Կապիտալ տրասֆերտներ/ՀՆԱ	0,8	0,7	0,5	0,7	1,5	1,4	2,9	3,2	1,0
Ուղղակի ներդրումներ/ՀՆԱ	1,1	3,2	11,7	6,6	5,5	3,3	4,7	4,3	6,1
Այլ կապիտալ/ՀՆԱ	15.7	17,3	9,1	9,0	8,5	4,8	1,8	0,9	-1,3

Հայաստանի կապիտալի և ֆինանսական հաշվի հաշվեկշիռը սկսած 1999թ-ից ունեցել է նվազման միտում, ինչը համահունչ է եղել ընթացիկ հաշվի վարքագծին: Հիմնական հոդվածները եղել են պետական վարկերը և ուղղակի ներդրումները: 2001-2003թթ.-երին զգալի են եղել նաև կապիտալ տրանսֆերտները՝ կապված Լինսի միջոցների ստացման հետ:

2004թ.-ին ընթացիկ հաշվի ֆինանսավորման կառուցվածքում մեծ կշիռ են կազմել օտարերկրյա ուղղակի ներդրումները: Ուղղակի ներդրումները 2004թ.-ին կազմել են 135 մլն ԱՄՆ դոլար՝ ֆինանսավորելով ընթացիկ հաշվի պակասուրդի 94%-ը, որը նախորդ տարիների համեմատ բավական բարձր ցուցանիշ է: Իրականացված ուղղակի ներդրումների 31%-ն ուղղվել է տնտեսության կապի ոլորտ, 28%-ը սննդի և խմիչքների արտադրության ոլորտներ: Ուղղակի ներդրումների ստացման աշխարհագրական կառուցվածքն ունի հետևյալ տեսքը. Հունաստան 31%, Արգենտինա 14%, Ֆրանսիա 23%, ԱՄՆ 8%, Ռուսաստան 5%:

Աղրբեջան

Աղրբեջան	*1996*	*1997*	*1998*	*1999*	*2000*	*2001*	*2002*	*2003*	*2004*
Կապիտալ և Ֆինանսական հաշիվ/ՀՆԱ	25.8	27.5	29.8	15.0	9.4	2.2	14.7	31.9	35.5
Կապիտալ տրասֆերտներ/ՀՆԱ									
Ուղղակի ներդրումներ/ՀՆԱ	19.7	28.1	23.0	11.1	2.5	4.0	17.1	32.9	27.3
Այլ կապիտալ/ՀՆԱ	6.1	-0.6	6.8	3.9	6.9	-1.8	-2.4	-1.0	8.2

Ադրբեջանի կապիտալի և ֆինանսական հաշիվը, բացառությամբ 2001թ-ի, մշտապես աչքի է ընկել զգալի զուտ ներհոսքով, որտեղ գերակշռողը մշտապես եղել են ուղղակի օտարերկրյա ներդրումները:

Կապիտալի շարժի և ֆինանսական հաշվով գրանցված զուտ ներհոսքը 2004թ.-ին 1.3 անգամ գերազանցել է 2003թ.-ի և 2.9 անգամ՝ 2002թ.-ի մակարդակը և կազմել է 3027.4 մլն. ԱՄՆ դոլար:

Աղյուսակ. Կապիտալի ներհոսքը Ադրբեջան

	2003թ.	*Կշիռն ընդհանուրի մեջ*	*2004թ.*	*Կշիռն ընդհանուրի մեջ*	*2004թ.-ի տոկոսային աճի տեմպը 2003թ.-ի համեմատ*
	մլն. ԱՄՆ դոլար	*%*	*մլն. ԱՄՆ դոլար*	*%*	
Ուղղակի ներդրումներ՝	***2293.2***	***98.1***	***2329.7***	***77.0***	***101.6***
---նավթի և գազի սեկտորում	*2040.9*	*87.3*	*2257.1*	*74.6*	*110.6*
---այլ սեկտորներում	*252.3*	*10.8*	*72.6*	*2.4*	*28.8*
Վարկեր և այլ ներդրումներ՝	***-13.7***	***-0.6***	***676.1***	***22.3***	***-***
Նավթի պարգևավճար (bonus)	***58.6***	***2.5***	***21.6***	***0.7***	***36.9***
ԸՆԴԱՄԵՆԸ	***2338.1***	***100.0***	***3027.4***	***100.0***	***129.5***

Նկատենք, որ օտարերկրյա կապիտալի զուտ ներհոսքը Ադրբեջանի տնտեսություն կազմել է ՀՆԱ-ի 35.5%-ը (2004թ.-ի ՀՆԱ-ն կազմել է 8.5 մլրդ. ԱՄՆ դոլար): Ընդ որում, ուղղակի ներդրումները (հիմնականում խոշոր նավթային ընկերությունների վաճառքը) կապիտալի ներհոսքի հիմնական աղբյուրն են հանդիսանում և 2004թ-ին կազմել են ընդհանուր ներհոսքի 77%-ը[2]: 2004թ-ի կապիտալ ներհոսքի մեծ մասը վերաուղղվել է վառելիքի արդյունահանման սեկտորի հետ կապված ապրանքների և ծառայությունների ներմուծմանը (1.8 մլրդ. ԱՄՆ դոլար): Տնտեսական զարգացման նախարարի հավաստմամբ, 2005թ.-ին կապիտալ ներդրումները Ադրբեջանում կազմելու են 4.7 մլրդ. դոլար, որից 3.2 մլրդ. դոլարը կիրականացվի ուղղակի ներդրումների տեսքով:

Ադրբեջանում ստեղծված է Պետական նավթային ընկերության հիմնադրամ (SOFAZ-State Oil Fund of Azerbaijan), որը հիմնականում պաշտպանում է տնտեսությունը նավթի գների անկման հետևանքով առաջացող հնարավոր շոկերից: Ադրբեջանի պետական նավթային ֆոնդի ակտիվները 2005թ.-ի ապրիլի 1-ի դրությամբ կազմել են 994

[2] Նկատենք, որ Ադրբեջանում օտարերկրյա ներդրողներն ունեն որոշակի արտոնություններ. ավելի քան 30% օտարերկրյա կապիտալի մասնակցությամբ ձեռնարկություններն ու բաժնետիրական ընկերությունները երկու տարով ազատվում են շահութահարկի վճարումից:

մլն դոլար: Ազգային բանկի արտաքին պահուստները 2005թ.-ի ապրիլի 1-ի դրությամբ կազմել են 891.34 մլն, որն ապահովում է ավելի քան 4.1 ամսվա ոչ-նավթային ներմուծման ծածկույթ և 6.5 անգամ գերազանցում է կարճաժամկետ պարտքի մակարդակը: Այսպիսով, Ադրբեջանի ռազմավարական արժութային պահուստները ներկայումս կազմում են շուրջ 1900 մլն դոլար: Ֆոնդի եկամուտները գոյանում են նավթի վաճառքից, Ադրբեջանի տարածքով Բաքու-Սուպսա նավթամուղով փոխադրման տրանզիտ վճարումներից և օտարերկրյա ներդրողների կողմից ետ հանձնված ակտիվներից: Ֆոնդի միջոցները ուղղվում են նաև փախստականների ընտանիքների տեղավորմանը և նրանց սոցիալ-կենցաղային պայմանների բարելավմանը:

Ադրբեջանի ***<u>արտաքին պետական պարտքը</u>*** 2004թ-ին կրճատվել է և կազմել է ՀՆԱ-ի 18%-ը՝ նախորդ տարվա 22%-ի փոխարեն:

Նկատենք, որ եթե ապրանքների և ծառայությունների հաշվեկշռից հանենք նավթային հատվածի ապրանքների և ծառայությունների ներմուծման մասը, Ադրբեջանի ընթացիկ հաշվի 2.6 մլրդ պակասուրդը կվերածվի 1.0 մլրդ հավելուրդի: Այսինքն, «Բաքու-Թբիլիսի-Ջեյհան» նավթամուղի գործարկումից հետո երբ կրճատվեն դրանց շինարարության, տրանսպորտի և այլ ծառայությունների ներմուծման ծավալները, կձևավորվի վճարային հաշվեկշռի ընթացիկ հաշվի հավելուրդ: Դա են վկայում նաև Ասիական զարգացման բանկի կանխատեսումները, համաձայն որոնց 2007թ.-ին Ադրբեջանում ընթացիկ հաշվի հավելուրդը կազմելու է ՀՆԱ-ի 4.5%-ը: Կապիտալի արտահոսքի վրա սահմանափակումների առկայության պայմաններում տնտեսությունում հավանաբար կառաջանա արտարժույթի ավելցուկային առաջարկ, ինչը կուժեղացնի ճնշումներն ազգային արժույթի արժեքավորման ուղղությամբ: Վերջինս կարող է էլ ավելի խորացնել տնտեսությունում առկա, այսպես կոչված, «Հոլանդական հիվանդության» վտանգը:

<u>Վրաստան</u>

Վրաստան	*1997*	*1998*	*1999*	*2000*	*2001*	*2002*	*2003*	*2004*
Կապիտալ և ֆինանսական հաշիվ/ՀՆԱ	8.9	9.4	4.5	2.9	6.3	1.1	9.6	10.3
Ուղղակի ներդրումներ/ՀՆԱ	6.8	7.3	2.9	4.3	3.4	4.9	8.5	9.8
Այլ կապիտալ/ՀՆԱ	2.1	2.1	1.6	-1.4	2.9	-3.8	0.1	0.5

Աղյուսակ. Օտարերկրյա կապիտալի ներհոսքը Վրաստան

	2002		2003		2004թ.	
	մլն. ԱՄՆ դոլար	%	մլն. ԱՄՆ դոլար	%	մլն.ԱՄՆ դոլար	%
Ուղղակի ներդրումներ, որից՝	**161.3**	68.0	**334.1**	91.1	**489.5**	101.7
-նավթամուղ և գազամուղ	**15.0**		**255.0**			
Վարկեր և այլ ներդրումներ՝	**75.8**	32.0	**32.6**	8.9	**-8.0**	1.7
ԸՆԴԱՄԵՆԸ	**237.1**	100.0	**366.7**	100.0	**481.5**	100.0

2004թ.-ին օտարերկրյա կապիտալի ներհոսքը Վրաստանի տնտեսություն կազմել է ՀՆԱ-ի 9.4%-ը (2004թ.-ի ՀՆԱ-ն կազմել է 5.1 մլրդ. ԱՄՆ դոլար): Ընդ որում, ուղղակի ներդրումների տեսքով կապիտալի ներհոսքը տարեցտարի աճում է. 2002թ.-ին այն կազմել է ընդհանուր ներհոսքի 68.0%-ը, 2003թ.-ին՝ 91.1%-ը և 2004թ.-ին՝ 101.7%-ը:

Նկատենք, որ Վրաստանի նոր կառավարությանը սատարելու և 2004-2006թթ.-երի ընթացքում երկրի անհետաձգելի կարիքները հոգալու նպատակով միջազգային դոնորները Վրաստանին կտրամադրեն շուրջ 1 մլրդ ԱՄՆ դոլար (850 մլն. եվրո)[3]: Բացի այդ, Վրաստանի հետ տնտեսական և առևտրային կապերին զարկ տալու նպատակով Իրանի կառավարությունը նախատեսում է Վրաստանում ձեռնարկել 20 մլն Եվրոյի ծրագրեր: Այդ նպատակով նախատեսվում է Վրաստանում բացել Իրանի մշտական առևտրի ներկայացուցչություն:

Վրաստանի կառավարությունը նախատեսում է նաև սեփականաշնորհել Ռուստավի քաղաքում մետալուրգիական գործարանը, Ազոտ քիմիական գործարանը, ինչպես նաև նավթի վերամշակման գործարանը և նավթի տերմինալը Բաթումիում: Դրանց հաշվին նախատեսում են պետբյուջեն համալրել առնվազն 400 մլն Լարիով:

Վրաստանի տնտեսական զարգացման նախարարը գտնում է, որ 7-8 % գնաճը լուրջ խնդիրներ չի ստեղծում տնտեսության համար, թեպետ հարկ է պահել գնաճի ցածր մակարդակ:

Վրաստանում տնտեսական ակտիվության հիմնական բնագավառներն են գյուղատնտեսությունը, առևտուրը, տուրիզմը, էներգետիկան և տրանսպորտը, ինչպես նաև սննդի վերամշակման և հեռահաղորդակցության ճյուղերը: Վրաստանում ամենախոշոր օտարերկրյա ներդրողը ԱՄՆ-ն է, որը յուրաքանչյուր տարի ներդնում է ուղղակի ներդրումների ընդհանուր ծավալի շուրջ 20-30%-ը:

[3] *Որոշումը կայացվել է 2004թ.-ի հունիսի 16-ին Եվրոպական Հանձնաժողովի և Համաշխարհային Բանկի Բրյուսելում կայացած համատեղ կոնֆերանսի ժամանակ, որին մասնակցում էին 31 երկրներ և 12 միջազգային կազմակերպություններ:*

Արտարժութային պահուստները. 2004թ-ի խոշոր ֆինանսական հոսքերի հաշվին համալրվել են նաև երկրի արտարժութային պահուստները՝ շուրջ 192 մլն. ԱՄՆ դոլարի չափով:

2004թ.-ի դեկտեմբերի 31-ի դրությամբ երկրի արտարժութային պահուստները կազմել են 383.7մլն. և 2005թ.-ի փետրվարի վերջի դրությամբ՝ 403.1 մլն ԱՄՆ դոլար: Պահուստները 2004թ.-ի սկզբի համեմատ ավելացել են 211 մլն. ԱՄՆ դոլարով, որից 195.1մլն. դոլարը գնվել է արժութային շուկայից: Նկատենք, որ 2004թ.-ի դեկտեմբերից փոխվել է Վրաստանի ազգային բանկի վարքագիծը արժութային շուկայում, այն է՝ սկսել է վաճառել արտարժույթ Թբիլիսիի միջբանկային արժութային շուկայում: Եվ եթե 2004թ.-ի դեկտեմբերին այնուամենայնիվ հանդես է եկել որպես զուտ գնորդ, 2005թ.-ի հունվար ամսին՝ զուտ վաճառող, ապա փետրվարին իրականացրել է միայն արտարժույթի վաճառքի գործարքներ՝ շուրջ 6.8 մլն ԱՄՆ դոլարի չափով:

Ապրանքների և ծառայությունների ներմուծման ծածկույթի ցուցանիշը Վրաստանում դեռևս ցածր է և կազմում է 2.3 ամիս:


Արտաքին պարտք. 2004թ.-ի վերջի դրությամբ Վրաստանի արտաքին պարտքը, առանց Կառավարության երաշխիքների, 1761.6 մլն ԱՄՆ դոլար էր, որը կազմում էր ՀՆԱ-ի 34.2%-ը նախորդ տարվա 43.5%-ի դիմաց: Պարտք/արտահանում գործակիցը կազմել է 113.7%՝ նախորդ տարվա 137.8%-ի դիմաց: Արտաքին պարտքն ամբողջությամբ երկարաժամկետ է: Արժույթի միջազգային հիմնադրամից և Համաշխարհային բանկից ներգրավված վարկերի ծավալը կազմում է ընդհանուր պարտքի 45%-ը, այսինքն պարտքի մեծ մասը ոչ արտոնյալ է: Մյուս վարկատուներն են Թուրքմենստանը (18.2%), Փարիզի ակումբի վարկատուները (11%), Ռուսաստանը (8.8%) և այլ երկրներ:

Արժութային քաղաքականություն և փոխարժեք

Հայաստան

2004 թվականին համաշխարհային արժութային շուկայում ԱՄՆ դոլարի արժեզրկումը գրեթե բոլոր պետությունների ներքին արժութային շուկաներում արտահայտվեց ազգային արժույթի արժեքավորմամբ: ՀՀ ներքին արժութային շուկան նույնպես զերծ չմնաց այդ ազդեցությունից:

ԱՄՆ դոլարի նկատմամբ դրամի արժեքավորումը 2004թ.-ին կազմել է 16.5%՝ նախորդ տարվա վերջի 566.0-ից հասնելով 485.84 դրամի (վարիացիա՝ 725.75, միջին շեղում՝ 27.12 դրամ, նվազագույն փոխարժեք՝ 478.0 դրամ, առավելագույն՝ 570.0 դրամ): ՀՀ դրամ/ԱՄՆ դոլար միջին տարեկան փոխարժեքը արժեքավորվել է 8.49 %-ով:



Տարեսկզբին ավելցուկային իրացվելիությունը կարգավորելու խնդիր ունենալով՝ Կենտրոնական բանկը, միջբանկային շուկայում 2004թ.-ի հունվար և մարտ ամիսներին վաճառել է 2.6 և 4.1 մլն ԱՄՆ դոլար՝ համապատասխանաբար 568.38 և 562.42 դրամ միջին կշռված փոխարժեքով:


2004թ.-ի սեպտեմբերից սկսած՝ ելնելով կապիտալ և մասնավոր տրանսֆերտների մեծածավալ ներհոսքի հետևանքով արժութային շուկայում ստեղծված ճնշումը թուլացնելու անհրաժեշտությունից, ԿԲ-ն, արտարժույթի ներգրավման սվոփ գործիքին զուգահեռ, իրականացրել է արտարժույթի մեծածավալ առքի գործառնություններ՝ միջբանկային շուկայում գնելով 24.90 մլն ԱՄՆ դոլար՝ 500.22 դրամ միջին կշռված փոխարժեքով:

Արտարժույթի առաջարկի աճի մասին է վկայում նաև արժութային շուկայում ԱՄՆ դոլարի առքի և վաճառքի ծավալների հարաբերակցությունը: ՀՀ արժութային շուկայում իրականացված գործառնությունների համախառն ծավալը աճել է 29.42%-ով և կազմել 2301.70 մլն ԱՄՆ դոլար (նախորդ տարի՝ 1778.52 մլն ԱՄՆ դոլար):

2004թ.-ին արժութային շուկայում գրանցվել է նաև եվրոպական միասնական արժույթի առաջարկի և պահանջարկի աճ: Այստեղ համախառն ծավալը աճել է 32.65%-ով և կազմել 166.99 մլն եվրո (նախորդ տարի՝ 125.88 մլն եվրո):

ՀՀ կենտրոնական բանկի կողմից սահմանած ԱՄՆ դոլարի նկատմամբ ՀՀ դրամի հաշվարկային փոխարժեքը 2005թ-ի առաջին եռամսյակում շարունակել է նախորդ տարում սկսված արժևորումը:

Եռամսյակի վերջում նախորդ ժամանակահատվածի վերջի համեմատ գրանցվել է 6.05% արժեքավորում՝ 485.84 դրամից 458.13 դրամ: Այսպիսի արժևորումը հետևանք է արտարժույթի առաջարկի աճի, ինչի մասին են վկայում ներքին արժութային շուկայում ձևավորված ծավալները:



Եռամսյակի ընթացքում առքի ծավալները ըստ ամիսների համապատասխանաբար կազմել են 91.90, 95.66 և 104.97 մլն ԱՄՆ դոլար, իսկ վաճառքի՝ 82.06, 93.81 և 97.88 մլն ԱՄՆ դոլար: Առքի և վաճառքի ընդհանուր ծավալները կազմել են 292.54 մլն և 273.76 մլն ԱՄՆ դոլար, իսկ փոխարժեքները համապատասխանաբար՝ 465.85 դրամ և 470.52 դրամ (գործարքների մոտ 16% իրականացվել են միջբանկային շուկայում): Եռամսյակի ընթացքում ԱՄՆ դոլարի առք ու վաճառքի համախառն ծավալը կազմել է մոտ 566.3 մլն ԱՄՆ դոլար, որը նախորդ եռամսյակի համեմատ նվազել է 27.49%, իսկ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ ավելացել է 35.88%-ով:

Հարկ է նշել նաև, որ արժութային շուկայում իրականացված վաճառքի գործառնությունների մեջ ներառված նաև Կենտրոնական բանկի կողմից իրականացված առքի ծավալները:


Ինչ վերաբերվում է եվրո/դրամ գործառնություններին, ապա այս շուկայում ծավալների փոփոխություն չի եղել: Առքի և վաճառքի ծավալները համապատասխանաբար կազմել են 12.63 և 33.76 մլն եվրո, իսկ նախորդ եռամսյակում դրանք կազմել էին 12.46 և 34.49 մլն եվրո:

Ադրբեջան

2003թ.-ի կեսերից Ադրբեջանի բանկը ներքին արժութային շուկայում օգտագործում է Առևտրի Բորսայական Էլեկտրոնային համակարգ (Bourse E-System of Trade), որի միջոցով առևտրային բանկերը արտարժույթի առքուվաճառք են իրականացնում Ազգային բանկի հետ: Միջբանկային արտարժույթի առքուվաճառքը նույնպես իրականացվում է էլեկտրոնային առևտրի համակարգի միջոցով:


Ադրբեջանում փոխարժեք-գներ կապը կայուն է. մասնագետների կարծիքով փոխարժեքը տնտեսությունում կատարում է փոխանցման մեխանիզմի դեր: Փոխարժեքի

ազդեցության լագը կազմում է 3 ամիս: Ադրբեջանի բանկը մշտապես հայտարարել է, որ թեև կարևորում է մանաթի փոխարժեքի կայունությունը և ավելցուկային արժույթի հետ գնումների միջոցով այն փորձելու է պահպանել որոշակի նեղ միջակայքում, սակայն եթե այս գործողությունները հանգեցնեն գնաճի ճնշումների ուժեղացման, ապա Ադրբեջանի բանկը նախապատվությունը կտա գներին:Այդ իսկ պատճառով, եթե մինչև 2005թ-ը Ադրբեջանի ազգային բանկը մանաթի փոխարժեքը ազատ փոխարկելի արտարժույթների նկատմամբ փորձում էր կայուն պահել՝ գնաճի տատանումներ թույլ չտալու, ինչպես նաև առևտրի պայմանները չվատթարացնելու նպատակով, 2004թ.-ի արդյունքներից ելնելով 2005թ.-ին գերապատվությունը տալիս է գնաճին: Ստորև ներկայացված է մանաթ/ԱՄՆ դոլար փոխարժեքի տարեկան դինամիկան սկսած 1995թ-ից:



Գրաֆիկից երևում է, որ մանաթի անվանական փոխարժեքը 1995-1998թթ.-ին դրսևորել է կայուն արժեքավորման միտում, իսկ 1999-2004թթ.-ին՝ արժեզրկվել է և միջին տարեկան արժեզրկումը կազմել է 4.8%:

Իրական արդյունավետ փոխարժեքը, որը 2003թ.-ին արժեզրկվել էր 11%-ով՝ Եվրոզոնայի երկրների և Ռուսաստանի հետ Ադրբեջանի առևտրային գործարքների մեծ ծավալներով և Մանաթի նկատմամբ եվրոյի ու ռուսական ռուբլու արժեքավորման պատճառով, 2004թ.-ին մնացել է գրեթե կայուն:



2004թ.-ի հունվար-փետրվար ամիսներին մանաթի փոխարժեքը արժեզրկվել է, իսկ հետագա ամիսիներին այն դրսևորել է հիմնականում արժեքավորման միտում: Եվ, թեև միջին տարեկան փոխարժեքը արժեզրկվել է 0.06%-ով, այնուամենայնիվ տարեվերջի դրությամբ այն արժեքավորվել է 0.4%-ով[4]: Համաձայն փորձագետների հաշվարկների, 2004թ.-ին արժութային շուկայում մանաթի նկատմամբ պահանջարկը գերազանցել է առաջարկը շուրջ 200 մլն դոլարի չափով՝ պայմանավորված նավթի գների բարձրացման հետևանքով մուտքերի աճով: Եվ, եթե Ազգային Բանկը չմիջամտեր, արժեքավորումը 2004թ.-ին կարող էր կազմել շուրջ 4-5%: Արտարժութային միջոցների ներհոսքի պայմաններում Ազգային բանկը 2004թ.-ի սկզբում իրականացրել է չստերիլիզացվող ինտերվենցիաներ, որը միակցվելով Կառավարության կողմից 2003թ.-ի երկրորդ կիսամյակում աշխատավարձերի աճի հետ, 2004թ.-ի ապրիլի վերջի դրությամբ բերեց 6.8 % գնաճի: Գնաճի հետագա զսպման նպատակով փորձել են կրճատել դրամական ագրեգատների աճի տեմպերը և 2004թ.-ի սեպտեմբերից սկսել իրականացնել ստերիլիզացվող ինտերվենցիաներ՝ թողարկելով Ազգային բանկի արժեթղթերը:

Սակայն 2005թ.-ի փետրվարի 11-ից մանաթի արժեքավորման տեմպերը արագացել են և տարեսկզբի համեմատ այն արժեքավորվել է 2.0%-ով՝ (մայիսի 3-ի դրությամբ): 2005թ.-ի առաջին եռամսյակի վերջի դրությամբ գնաճը կազմել է 13.1%, որը ըստ Ադրբեջանի նախագահի մեկնաբանման, պայմանավորված է ինչպես օբյեկտիվ պատճառներով, այն է՝ համաշխարհային շուկայում նավթի գների բարձրացմամբ և դրա հետ կապված ներմուծվող գների թանկացմամբ, եվրոյի նկատմամբ դոլարի արժեզրկմամբ, բնակչության դրամական եկամուտների աճով, և հետևաբար դրամական զանգվածի աճով, այնպես էլ գնաճին նպաստող արհեստական գործոններով, այսինքն՝ անառողջ մրցակցությամբ և մոնոպոլիզմով: Եվ, իշխանությունները որոշել են իրականացնել գնաճի զսպմանն ու դրա կրճատմանն ուղղված տնտեսական և ադմինիստրատիվ միջոցառումներ:

Վրաստան


Ներքին արժութային շուկան. Ազգային բանկը և խոշոր առևտրային բանկերը արտարժույթի առքուվաճառքի գործարքներն իրականացնում են Թբիլիսիի միջբանկային արտարժութային բորսայում (Tbilisi Interbank Currency Exchange (TICEX)), որը սակարկություններ է կազմակերպում ամեն օր: Սակայն առավել ակտիվ է արտարժույթի արտաբորսայական (OTC) առքուվաճառքը:

Ներքին արժութային շուկայի շրջանառությունը 2004թ.-ին կազմել է 4.5 մլրդ ԱՄՆ դոլար՝ նախորդ տարվա 3.6 մլրդ. ԱՄՆ դոլարի դիմաց և 540մլն եվրո՝ նախորդ տարվա 558.0 մլն. եվրոյի դիմաց: Ընդ որում ԱՄՆ դոլարի բորսայական առքուվաճառքը կազմել է ընդհանուր շրջանառության ծավալների 7.6%, արտաբորսայականը՝ 86.9%, իսկ փոխանակման կետերին բաժին է ընկել արտարժույթի առքուվաճառքի 5.5%-ը: Եվրոյի

[4] Ներկայացվ³ Í »Ý ³ Ùëí³ í»ñçÇ ¹ñáõÃÛ³ Ùµ ÷áË³ ñÅ»ùÝ»ñÝ Áë ï ³ ÙÇëÝ»ñÇ:

առքուվաճառքի 96.7%-ը իրականացվել է բորսայից դուրս՝ միջբանկային շուկայում: 2004թ.-ին Ազգային բանկի առքուվաճառքը արժութային շուկայում կազմել է շուկայի ընդհանուր ծավալի 38.0%-ը, իսկ բորսայական առքի ծավալների 70.4%-ը և վաճառքի ծավալների 4.5%-ը:

Փոխարժեքը. Վրաստանը, Ռուսաստանի ֆինանսական ճգնաժամից հետո, 1998թ.-ի դեկտեմբերին պաշտոնապես հայտարարել էր, որ վարում է ազատ լողացող փոխարժեքի քաղաքականություն, սակայն 2004թ.-ից ռեժիմը փոխել է կառավարելի լողացողի: Ազգային բանկը ակտիվորեն ինտերվենցիաներ է իրականացնում արժութային շուկայում՝ գների կայունությունն ապահովելու, այսինքն գնաճը նվազագույն մակարդակի հասցնելու համար: 2003-2004թթ.-երին Ազգային բանկը արժութային բորսայում հիմնականում իրականացրել է արտարժույթի առքի գործառնություններ՝ համալրելով երկրի սակավ արտարժութային պահուստները:



Գրաֆիկից երևում է, որ լարիի անվանական փոխարժեքը 1995-1998թթ.-ին դրսևորել է սահուն արժեզրկման միտում, այնուհետև՝ Ռուսաստանի ֆինանսական ճգնաժամի հետևանքով 1998թ.-ի օգոստոսից մինչև 1999թ.-ի մարտ ամիսը կտրուկ արժեզրկվել է (63%-ով), իսկ 1999-2002թթ.-ի ընթացքում ենթարկվել է ոչ կտրուկ տատանումների (և՝ արժեքավորման, և՝ արժեզրկման ուղղությամբ): Սակայն 2002թ.-ի մայիսից մտել է արժեքավորման փուլ:

Աղյուսակ. Գնաճը և փոխարժեքները Կովկասյան երկրներում

Միջին փոխարժեքի ինդեքս (1996=100, աճը նշ. արժևորում)	1996	1997	1998	1999	2000	2001	2002	2003	2004	2005*
Ադրբեջան	100.0	107.9	111.1	104.3	96.1	92.3	88.5	87.5	87.4	88.1
Վրաստան	100.0	97.3	90.9	62.4	63.9	60.9	57.5	58.8	65.9	75.6
Հայաստան	100.0	84.2	81.9	77.3	76.6	74.5	72.1	71.4	77.5	91.8

Գնաճ (միջին)	1996	1997	1998	1999	2000	2001	2002	2003	2004	2005*
Ադրբեջան	100.0	103.6	102.8	94.0	95.7	97.2	99.9	102.1	108.9	123.2
Վրաստան	100.0	107.1	110.9	132.2	137.6	144.0	152.0	159.2	168.3	183.6
Հայաստան	100.0	114.0	123.8	124.6	123.7	127.6	128.9	135.0	144.4	150.6

Գնաճ*Փոխարժեք	1996	1997	1998	1999	2000	2001	2002	2003	2004	2005*
Ադրբեջան	100.0	111.8	114.2	98.1	92.0	89.7	88.4	89.3	95.2	108.6
Վրաստան	100.0	104.2	100.8	82.5	87.9	87.7	87.4	93.7	110.9	138.8
Հայաստան	100.0	96.0	101.4	96.3	94.8	95.0	93.0	96.4	111.9	138.3


* - 2005 թվականի տվյալները բերված են առաջին եռամսյակի համար, Վրաստանի տվյալները՝ հունվար-փետրվարով

Ինչպես երևում է աղյուսակից, 1996-2005թթ.-երի շարքերում էական փոփոխություններ են գրանցվել 1998-1999 թվականներին Ռուսաստանի ճգնաճամի հետևանքների հետ կապված: Հետևաբար ամբողջ ժամանակահատվածը հարմար կլինի դիտարկել բաժանելով երկու մասի՝ 1996-1998 թվականներ և 1999-2005 թվականներ: Այսպես, 1996-1998 թվականներին Հայաստանի փոխարժեքի արժեզրկման չափը (18.1 տոկոս) զգալիորեն մեծ է եղել հարևան երկրների համեմատ: Ադրբեջանում նույն ժամանակահատվածում նույնիսկ գրանցվել է էական արժևորում (11.1 տոկոս) խոշորածավալ ուղղակի ներդրումների ներհոսքի պատճառով (միջինը 23.6 տոկոս ՀՆԱ-ում):

1998 թվականի Ռուսաստանի ճգնաժամը անդրադարձավ Կովկասյան երկրների վրա իրական փոխարժեքների արժեզրկմամբ (որը մոտարկված է երկրների գնաճ-փոխարժեք արտադրյալով): Ընդ որում, եթե Հայաստանի իրական փոխարժեքը արժեզրկվեց ընդամենը 5.0 տոկոսով, ապա Ադրբեջանում արժեզրկումը կազմեց 14.1 տոկոս, իսկ Վրաստանում՝ 18.2 տոկոս: Պետք է նաև նշել, որ Վրաստանում իրական փոխարժեքի արժեզրկումը տեղի ունեցավ անվանական փոխարժեքի արժեզրկման հետևանքով, իսկ Ադրբեջանում, որը թույլ չտվեց անվանական փոխարժեքի արժեզրկում, գրանցվեց խորը գնանկում՝ 8.5 տոկոս:

Արդյունքում 2004 թվականի դրությամբ 1996 թվականի համեմատ Ադրբեջանի գնաճը կազմեց ընդամենը 8.9 տոկոս, մինչդեռ Հայաստանում՝ 44.4 տոկոս, իսկ Վրաստանում՝ 68.3 տոկոս: Միևնույն ժամանակ մանաթի փոխարժեքը արժեզրկվել է 12.6 տոկոսով, լարիի փոխարժեքը՝ 34.1 տոկոսով, իսկ դրամի փոխարժեքը՝ 22.5 տոկոսով:

Գծապատկեր. Իրական փոխարժեքները (հաշվարկված գնաճը բազմապատկած փոխարժեքով) Հայաստանում, Վրաստանում և Ադրբեջանում 1996-2005 թվականներին



Դիտարկելով 1996-2005 թվականների իրական փոխարժեքների վարքագիծը կարելի է հանգել հետևյալ եզրակացությունների՝ 2003 թվականի դրությամբ երեք հանրապետություններն էլ մոտ են գտնվել մրցունակությունների մակարդակներով: Սակայն եթե Հայաստանի իրական փոխարժեքը 1996-2003 թվականներին դրսևորել է շատ կայուն վարքագիծ, ապա Ադրբեջանում և Վրաստանում տնտեսության մրցունակությունը էապես տատանվել է:

Ինչ վերաբերվում է 2003-2004 թվականներին, ապա Ադրբեջանը, վարելով խիստ կառավարելի փոխարժեքի քաղաքականություն, թույլ չտվեց մանաթի արժևորում, որի հետևանքով կարող ենք նկատել, որ սկսում են արձանագրվել էապես բարձր գնաճի տեմպեր (2005 թվականի առաջին եռամսյակի միջին գնաճը կազմել է 13.1 տոկոս):

ԴՐԱՄԱՎԱՐԿԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

ՆՊԱՏԱԿՆԵՐ ԵՎ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

	Հայաստանի Հանրապետություն	***Վրաստան***	***Ադրբեջան***
Գլխավոր նպատակ	Գների կայունության ապահովումը	Գնաճը	Գների կայունության ապահովում
Ռազմավարություն	Փողի ագրեգատների նպատակադրում լողացող փոխարժեքի ռեժիմի պայմաններում	Փողի ագրեգատների նպատակադրում լողացող փոխարժեքի ռեժիմի պայմաններում	Փողի ագրեգատների նպատակադրում լողացող-կառավարվող փոխարժեքի ռեժիմի պայմաններում
Միջանկյալ նխպատակ	Փողի զանգված	Փողի զանգված	Փողի զանգված և փոխարժեք
Գործառնական նպատակ	Փողի բազա	Զուտ ներքին ակտիվները	Փոխարժեք

Հայաստանի Հանրապետությունում գների կայունության ապահովումը որպես դրամավարկային քաղաքականության գլխավոր նպատակ սահմանվել է 1996 թվականի »ՀՀ ԿԲ մասին« ՀՀ օրենքով: Մինչ այդ, 1993 թվականից ի վեր որպես գլխավոր նպատակ էր հանդիսանում դրամի արտաքին և ներքին գնողունակության ապահովումը: Դրամավարկային քաղաքականության ռազմավարությունը փողի ագրեգատների նպատակադրումն է, որը լիրաժեք կերպով ներդրվել է 1996 թվականին՝ դրամը որպես ազատ լողացող արժույթ սահմանելուց հետո:

Վրաստանը, Ռուսաստանի ֆինանսական ճգնաժամից հետո, 1998թ.-ի դեկտեմբերին պաշտոնապես հայտարարել է, որ վարում է ազատ լողացող փոխարժեքի քաղաքականություն: Սակայն Ազգային բանկը մինչ օրս ակտիվորեն ինտերվենցիաներ է իրականացնում արժութային շուկայում՝ գների կայունությունն ապահովելու, այսինքն գնաճը նվազագույն մակարդակի հասցնելու համար: Ըստ էության Վրաստանում դոլարացման բարձր մակարդակը և փոխարժեք գներ ուժեղ կապ են պատճառը, որ Վրաստանի կենտրոնական բանկին ստիպում են ավելի մեծ ուշադրություն դարձնել փոխարժեքի տատանումներին:

Ադրբեջանի ազգային բանկը դրամավարկային քաղաքականություն իրականացնելիս կիրառում է փողի ագրեգատների ռազմավարությունը՝ կառավարվող լողացող փոխարժեքի ռեժիմի պարագայում: Հիմնական նպատակը գների կայունության ապահովումն է: Սա առավել կարևորվում է 2004 թվականին Ազգային բանկի մասին

օրենքում փոփոխություններից հետո, ըստ որոնց ԱՔ-ի շնորհվել է ավելի մեծ անկախություն:

Հայաստանի Հանրապետության դրամավարկային քաղաքականության ցուցանիշները

	1995	1996	1997	1998	1999	2000	2001	2002	2003	2004
ՍԳԻ (տարեվերջի նկ. աճը, %)	32.2	5.7	21.9	-1.3	2	0.4	0.9	2	8.6	2
ՍԳԻ (միջին տարեկան, %)	176	18.7	13.9	8.7	0.6	-0.8	3.1	1.1	4.7	7
ՀՆԱ աճ (% փոփ.)	6.90	5.87	3.32	7.34	3.26	5.90	9.56	13.19	13.91	10.10
Դրամ/ԱՄՆ դոլար միջին փոխարժեք (% փոփ.)	-28.4	-1.83	-15.76	-2.80	-5.64	-0.83	-2.80	-3.19	-0.93	8.49
Վերաֆինանսավորման տոկոսադրույք	52.00	60.00	54.00	39.00	43.00	25.00	15.00	13.50	7.00	3.75
Փողի բազա, (% փոփ)	86.0	40.5	22.5	8.6	1.1	32.1	9.7	38.5	6.6	11.4
Փողի զանգված (% փոփ.)	68.72	35.08	29.20	35.97	13.65	38.74	4.48	28.75	15.11	22.62
Դրամային զանգվածի աճ, %	114.35	34.06	8.70	23.26	-2.17	36.30	8.74	48.51	7.53	9.24
Կանխիկ/փողի զանգված, %	61.12	63.98	53.52	43.31	39.26	39.50	41.33	43.71	39.45	34.47
Դրամային ավանդներ/փողի զանգված, %	18.46	15	12.9	16.9	12.6	11.4	11.7	17.5	17.7	16.7
Արտարժութային ավանդներ/փողի զանգված,%	20.42	21.02	33.55	39.76	48.14	49.06	46.98	38.84	42.87	48.83
Արտարժութային ավանդներ/ընդհանուր ավանդներ, %	38.9	58.4	72.2	70.1	79.3	81.1	80.1	69.0	70.8	74.8
Փողի բազմարկիչ	1.37	1.32	1.53	1.96	2.03	2.08	1.96	1.82	1.97	2.16
Մոնետիզացիա, %	7.71	8.22	8.73	10.0	10.99	14.6	13.38	14.87	14.37	15.1

Վրաստանի դրամավարկային քաղաքականության ցուցանիշները

	1996	1997	1998	1999	2000	2001	2002	2003	2004
ՍԳԻ (տարեվերջի նկ. աճը, %)	13.9	7.3	10.7	10.9	4.6	3.4	5.4	7.0	7.5
ՍԳԻ (միջին տարեկան, %)	39.4	7.1	3.5	19.1	4.0	4.7	5.6	4.8	4.3
ՀՆԱ աճ (% փոփ.)	10.5	10.8	2.9	3.0	1.9	4.7	5.5	11.1	8.4
Լարի/ԱՄՆ դոլար միջին փոխարժեք (% փոփ.)		2.8	7.1	45.7	-2.4	4.9	5.9	-2.3	-10.7
Վերաֆինանսավորման տոկոսադրույք	43.4	26.6	43.3	34.6	18.2	17.5	27.7	16.9	11.87
Փողի բազա, (% փոփ)	36.3	32.6	-6.3	18.8	27.0	10.2	19.6	14.3	49.8
Փողի զանգված (% փոփ.)	41.9	35.4	-1.2	20.7	39.0	18.5	17.9	15.5	42.6
Լարիի զանգված(% փոփ.)		34.5	-11.6	9.6			15.5	14.1	60.4
Կանխիկ/փողի զանգված, %	69	64.3	57.6	54.9	49.5	47.6	45.3	41.6	40.7
Լարիով ավանդներ/փողի զանգվածում, %	16.1	14.8	13.3	9.5	9.3	7.5	8.3	8.1	15.2
Արտարժույթով ավանդների կշիռը փողի զանգվածում, %	14.9	20.9	29.1	35.6	41.2	44.9	46.4	50.3	44
Արտարժույթով դեպոզիտների կշիռը ընդհանուր դեպոզիտների ծավալում, %	48.2	58.5	68.7	79	81.5	85.7	84.9	86.1	74.3
Փողի բազմարկիչ	1.23	1.35	1.42	1.44	1.58	1.7	1.7	1.83	1.81
Մոնետիզացիա, %	6.7	8.0	7.3	7.9	10.4	11.1	11.7	12.5	15.4

Աղրբեջանի դրամավարկային քաղաքականության ցուցանիշները

	1996	1997	1998	1999	2000	2001	2002	2003	2004
ՍԳԻ (տարեվերջի նկ. աճը, %)	6.5	0.4	-7.6	-0.5	2,2	1,3	3,3	3,6	10,4
ՍԳԻ (միջին տարեկան, %)	19.8	3.6	-0.8	-8.5	1.8	1.5	2.8	2,2	6.7
ՀՆԱ աճ (% փոփ.)	1.3	5.8	10.0	7.4	11.4	9.9	10.6	11.2	10.2
Մանաթ/ԱՄՆ դոլար միջին փոխարժեք (% փոփ.)	-2.5	-7.3	-2.9	6.5	8.6	4.1	4,3	1,1	0,1
Վերաֆինանսավորման տոկոսադրույք	20.0	12.0	14.0	10.0	10.0	10.0	7.0	7.0	7.0
Փողի բազա, (% փոփ)	17,6	41,4	-22,0	15,9	29,1	1,7	14,0	23,5	64,7
Փողի զանգված (% փոփ.)	19	34	-17	22	87	-12	14	30	38.4
Մանաթի զանգված (% փոփ.)	25.8	29.2	-21.7	15.2	16	7.8	15.4	28	31.9
Կանխիկ/փողի զանգված, %	56	56.7	54.1	54.3	34.6	42.8	42.5	40.1	31.8
Մանաթով ավանդների/փողի զանգված, %	21.9	18.7	17.1	12.8	7.1	8.3	9.1	10.8	13.7
Արտարժութային ավանդներ/փողի զանգված,%	22.1	24.6	28.9	32.9	58.3	48.9	48.4	49.1	54..5
Արտարժութային ավանդներ/ընդհանուր ավանդներ, %	50.2	56.8	62.8	71.9	89.1	85.4	84.2	81.9	79.9
Փողի բազմարկիչ	1,4	1,4	1,6	1,6	2,2	1,9	1,9	2,0	1,8
Մոնետիզացիա, %	11,3	13,8	11,4	13,4	16,3	12,9	13,3	14,5	17,9

ԴՐԱՄԱՎԱՐԿԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԻՔՆԵՐ

	Հայաստանի Հանրապետություն	Վրաստան	Աղրբեջան
Իրացվելիություն ներարկող	Ռեպո, արժեթղթերի առք, արտարժույթի առք, արտարժութային սվոպ	ռեպո գործառնություններ, վարկային սակարկություններ, արժեթղթերի առք, արտարժույթի առք	ռեպո գործառնություններ
Իրացվելիություն ներքաշող	Հակադարձ ռեպո, արժեթղթերի վաճառք, արտարժութային սվոպ	արտարժույթի վաճառք	արտարժութային ինտերվենցիաներ
Մշտական հնարավորության	Լոմբարդային վարկ, ավանդ	օվերնայթ վարկավորում	օվերնայթ վարկավորում և լոմբարդային վարկեր
Պարտադիր պահուստավորում			

<u>Հայաստանի Հանրապետությունում</u> պարտադիր պահուստավորման նորման ներկայումս կազմում է 6%, իսկ հունիսիս 1-ից կկիրառվի 8% նորման: Դրամային ավանդների դիմաց պահուստավորումն իրականացվելու է դրամով, արտարժութային ավանդների դիմաց՝ արտարժույթով: ՀՀ-ում 2004-2005 թվականների կապիտալ ներհոսքի ստերիլիզացման արդյունքում գոյացած ավելցուկային իրացվելիությունը կրճատվել է հակադարձ ռեպո գործարքների կնքման միջոցով, նաև, բանկերը, հաճախ օգտվել են

մշտական հնարավորության ավանդային գործիքից: Իրացվելիության ներարկման անհրաժեշտության դեպքում ԿԲ-ն հաճախ կիրառել է արտարժույթի առքի, ռեպո համաձայնագրերի և արժեղթղերի առքի գործիքները:

Վրաստանում պարտադիր պահուստավորման նորման, բացի համակարգային իրացվելիության խնդիր լուծելուց, օգտագործվում է նաև դոլարացման մակարդակի կրճատման համար. պահուստավորման նորման արտարժութային դեպոզիտների համար կազմում է 13% և լարիով դեպոզիտների համար՝ 8%:

Վերջին ժամանակներս՝ սկսած 2003թ-ից, Վրաստանի ազգային բանկը իրացվելիության կարգավորման համար սկսել է ավելի հաճախ կիրառել արտարժութային առք ու վաճառքի գործիքը՝ հիմնականում առքի ուղղությամբ: Նպատակը մի կողմից բազայի կառավարումն է և մյուս կողմից տնտեսությունունից ավելորդ դոլարի առաջարկի ներքաշումն է: Ազգային բանկը և խոշոր առևտրային բանկերը արտարժույթի առքուվաճառքի գործարքներն իրականացնում են Թբիլիսիի միջբանկային արտարժութային բորսայում (Tbilisi Interbank Currency Exchange (TICEX)), որը սակարկություններ է կազմակերպում ամեն օր: Սակայն առավել ակտիվ է արտարժույթի արտաբորսայական (OTC) առքուվաճառքը:

Ադրբեջանում պարտադիր պահուստավորումը կազմում է 10% մինչև 1 տարի ժամկետայնությամբ և 0%՝ 1 տարուց ավել ժամկետայնությամբ ավանդների համար: Բացի իրացվելիության կարգավորման գործիք լինելում սա նպատակ ունի նաև խթանել երկարաժամկետ ավանդադրումը: Նորմայի դիվերսիֆիկացիային հաջորդող մեկ տարվա ընթացքում կարճաժամկետ ավանդներն ավելացել են 2.4%-ով, մինչդեռ երկարաժամկետ ավանդները՝ 3.4 անգամ:

Ադրբեջանում 2004 թվականի սեպտեմբերից թողարկվում են Ազգային բանկի արժեթղթերը, որոնց եկամտաբերությունը ներկայումս կազմում է 4.6%, ժամկետայնությունը տատանվում է 1 և 3 ամիսների միջև, լինում են թերի տեղաբաշխումներ: Սեպտեմբերից ի վեր տեղաբաշխվել է մոտ 70 մլն ԱՄՆ դոլար ծավալով արժեթուղթ, ներկայումս շրջանառության մեջ է մոտ 23 մլն-ը: ՊՊ շուկան զարգացած չէ:

2005 ԹՎԱԿԱՆԻ ԾՐԱԳՐԵՐԸ

Հայաստանի Հանրապետություն

2005 թվականի դրամավարկային քաղաքականությունն ուղղված է լինելու տարեկան առավելագույնը 3% գնաճի ապահովմանը՝ դրամային և փողի զանգվածների

տարվա վերջի դրությամբ կաճեն համապատասխանաբար 15.5% և 18.5%-ով, ինչն կգերազանցի անվանական ՀՆԱ աճը՝ հանգեցնելով տնտեսության փողայնացման աճի: Արդյունքում՝ դրամային զանգվածի շրջապտույտի արագությունը տարվա ընթացքում կնվազի 4.7%-ով, իսկ փողի զանգվածի շրջապտույտի արագությունը՝ 10.9%-ով: Ավանդները կավելանան 21%-ով:

Վրաստան

2005 թվականի Տնտեսական զարգացման և աղքատության կրճատման պետական ծրագրի շրջանակներում նախատեսվում է ապահովել տարեկան 5% գնաճ՝ փողի բազայի 18-20% աճի պայմաններում: Վերջինս նախատեսվում է ապահովել բանկերին վարկավորման և արտաքին պահուստաների համալրման միջոցով: Փողի զանգվածի աճը կապահովվի հիմնականում լարիի զանգվածի աճի հաշվին: Լարիի փոխարժեքի կարճաժամկետ կտրուկ տատանումները հարթելու նպատակով Ազգային բանկը կիրականացնի երկկողմանի ինտերվենցիաներ: Այստեղ ուշադրություն կդարձվի իրական արդյունավետ փոխարժեքի վարքագծին և քաղաքականությունը կուղղվի նրան, որպեսզի չվնասվի երկրի մրցունակությունը:

Ադրբեջան

2005-06 թվականին դրամավարկային քաղաքականությունն ուղղված է լինելու գնաճի 2-3% մակարդակի ապահովմանը, տնտեսության արագ փողայնացմանը և տնտեսական 7% աճի ապահովմանը: Նախատեսվում է ավանդների 29-34% աճ, վարկավորման 31-35% աճ: Վերֆինանսավորման տոկոսադրույքը կնվազեցվի մինչև 4%: Փողի շրջապտույտի արագությունը կբարելավվի 10-12%-ով: Մանաթի զանգվածը նախատեսվում է ավելացնել 29-33%, փողի զանգվածը՝ 25-30%:

Հիմնական հարկատեսակների գծով գործող հարկային արտոնությունները՝ Հայաստան, Ադրբեջան, Վրաստան

հարկատեսակ	**Հայաստան**	**Ադրբեջան**	**Վրաստան**
Ավելացված արժեքի հարկ	▪ հանրակրթական հաստատությունները՝ ուսման վարձի մասով,դասագրքերը, մանկական գրքերը, գիտական բնույթի հրատարակումները ▪ անասնաբուժական դեղամիջոցների, թունաքիմիկատների, պարարտանյութերի, գյուղատնտեսական մշակաբույսերի և բազմամյա տնկարկների սերմացուների և տնկանյութի իրացումը՝ գյուղատնտեսական արտադրանք արտադրողներին ▪ արտադրողի կողմից երկրում արտադրված գյուղատնտեսական արտադրանքի իրացումը. ▪ որոշ կատեգորիաների անձանց խնամքի հետ կապված ծառայությունները, ▪ թերթերի և ամսագրերի իրացումը ▪ կրոնական բնույթի ապրանքների իրացումը և ծառայությունների մատուցումը ▪ վիճակախաղերի տոմսերի անվանական արժեքով իրացումը ▪ ապահովագրական և վերաապահովագրման գործառնությունները ▪ կենսաթոշակային ապահովման գործառնությունները ▪ ֆինանսական հիմնական գործառնությունները և ծառայությունները ▪ դոնորային արյան, մայրական կաթի, պրոթեզաօրթոպեդիկ պարագաների, բժշկական տեխնիկայի և պարագաների, բուժօգնության, բուժսպասարկման ծառայությունների, բուժկանխարգելիչ ձեռնարկություններում ու կազմակերպություններում բուժման հետ կապված և այդ բուժօգնության շրջանակներում հիվանդների կողմից պատրաստված ապրանքների և կատարված ծառայությունների իրացումը ▪ միջազգային ֆինանսական կազմակերպությունների վարկային կամ շնորհային ծրագրերի նախապատրաստման միջոցների հաշվին ապրանքների մատակարարումը և ծառայությունների մատուցումը ▪ հասարակական (այդ թվում՝ բարեգործական) և կրոնական կազմակերպությունների կողմից անհատույց սպառումը ▪ կառավարության կողմից սահմանած ցանկում նշված թանկարժեք եւ կիսաթանկարժեք քարերի իրացումը ▪ թանկարժեք մետաղներից պատրաստված ոսկերչական նշանակության կիսաֆաբրիկատների իրացումը ▪ այլ գործարքներ	▪ մասնավորեցման ծրագրի շրջանակում գնված պետական ձեռնարկության գույքի արժեքը, ինչպես նաև պետական գույքից ստացված ռենտավճարի այն մասը, որը մուտք է լինում բյուջե ▪ ֆինանսական ծառայությունների մատուցումը ▪ ազգային արժույթի և արտարժույթի, արժեթղթերի մատակարարումը, փոխանցումը և ներմուծումը ▪ Ադրբեջանի ԿԲ-ում դեպոնագրվող ոսկու և արժութային արժեքների ներմուծումը ▪ ձեռնարկության հիմնադիր կապիտալում ցանկացած գույքի ներդրումը, բացառությամբ ներմուծված գույքի ▪ պետական վճարները, տուրքերը ▪ լրատվական նյութերի թողարկումը, վաճառքը, գնումը, բացառությամբ գովազդային ծառայությունների, դասագրքերի, մանկական գրքերի իրացումը, պետբյուջեից ֆինանսավորվող թողարկումները ▪ կրոնական բնույթի ծառայությունների մատուցումը, ▪ ԿԲ-ի լիազորությունների իրականացման համար անհրաժեշտ ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ներմուծումը ▪ Ադրբեջանի նավթային պետական ընկերությանը ցանկացած տեսակի հիմնական միջոցի տրամադրման գործառնությունները, որոնք նախատեսված են նավթի և գազի պաշարների հետազոտման, զարգացման և արտադրության բաշխման, ինչպես նաև այլ համաձայնագրերով ▪ Ներմուծման այլ տեսակներ, որոնք այս հոդվածներով նախատեսված չեն, կարող են ազատվել ԱԱՀ-ից ▪ այլ գործարքներ	▪ ֆինանսական ծառայությունների մատուցումը, ▪ ազգային արժույթի կամ արտարժույթի ▪ արժեթղթերի իրացումը կամ ներմուծումը ▪ ԿԲ կողմից ոսկու ներմուծումը ▪ ակցիզային դրոշմանիշերի և ֆինանսների նախարարության հատուկ նամականիշերի իրացումը կամ ներմուծումը, ▪ բռնագանձված և տիրազուրկ արժեքների վաճառքից բյուջե մուտքերը, ▪ մասնավորեցման ծրագրով գույքի օտարումը, ▪ դրամաշնորհի կարգավիճակ ունեցող մարդասիրական օգնության ներմուծումը, դրանց հետ կապված ծառայությունների մատուցումը, ▪ ֆիզիկական անձանց կողմից ապրանքների ներմուծումը՝ մաքսատուրքից ազատվող արժեքի սահմաններում, ▪ նավթի և գազի արդյունաբերության համար անհրաժեշտ մեքենասարքավորումների, մասերի և նյութերի ներմուծումը, ինչպես նաև այդ ոլորտի գործունեության համար անհրաժեշտ ապրանքների, ծառայությունների մատակարարումը, արտոնագրերի ստացումը ▪ կրոնական բնույթի ապրանքների իրացումը և ծառայությունների մատուցումը ▪ մաքսային տարածք ապրանքների վերաներմուծումը, ժամանակավոր ներմուծումը, տարանցիկ փոխադրումը: Ապրանքների ներմուծումը վերաարտահանման համար ▪ հումքի և կիսաֆաբրիկատների ներմուծումը՝ արտահանման համար նախատեսված ապրանքների արտադրության համար ▪ մանկավարժական ծառայությունների մատուցումը, գիտական և մանկավարժական գործունեության համար անհրաժեշտ համակարգիչների, սարքերի և քիմիական նյութերի ներմուծումը ▪ պետական առողջապահական ծրագրերում ընդգրկված որոշ կատեգորիների մարդկանց բժշկական ծառայությունների մատուցումը ▪ գյուղատնտեսական ապրանքների սկզբնական մատակարարումը՝ արտադրողի կողմից ▪ մանկական սննդի, հիգիենիկ, դիաբետիկ ապրանքների ներմուծումը և մատակարարումը, ▪ այլ գործարքներ

Ակցիզային հարկ	▪ *արտահանված ենթաակցիզային ապրանքների օտարումը,* ▪ *«ներմուծում՝ ազատ շրջանառության համար» մաքսային ռեժիմից տարբերվող ռեժիմներով հանրապետության մաքսային տարածք ներմուծվող և այդ տարածքից արտահանվող ակցիզային հարկով հարկման ենթակա ապրանքները* ▪ *օրենսդրությամբ սահմանված կարգով բռնագրավված, պետությանը հանձնված տիրազուրկ և ժառանգության իրավունքով պետությանն անցած ակցիզային հարկով հարկման ենթակա ապրանքների ներմուծումը և օտարումը* ▪ *մաքսային օրենսդրությամբ սահմանված՝ ապրանքների քանակը կամ մաքսային արժեքը չգերազանցող չափով անհատ ձեռնարկատեր չհանդիսացող ֆիզիկական անձանց կողմից ներմուծվող՝ ենթաակցիզային ապրանքները* ▪ *օրենքով կարող են սահմանվել ակցիզային հարկի այլ արտոնություններ:*	▪ *մինչև 3 լիտր ալկոհոլային խմիչքների և 3 բլոկ ծխախոտի ներմուծումը ֆիզիկական անձանց կողմից անձնական սպառման նպատակով,* ▪ *տարանցիկ փոխադրվող ապրանքները,* ▪ *Ադրբեջանի տարածք ապրանքների ժամանակավոր ներմուծումը, բացառությամբ վերաարտահանման համար նախատեսվածների* ▪ *ապրանքները, որոնք նախատեսված են վերաարտահանման համար և ապահովված են գրավով (երաշխավորությամբ)* ▪ *այլ գործարքներ*	▪ *սեփական օգտագործման համար նախատեսված ալկոհոլային խմիչքների արտադրությունը,* ▪ *ֆիզիկական անձանց կողմից մինչև 2 լիտր ալկոհոլային խմիչքների և մինչև 200 հատ ծխախոտի գլանակների ներմուծումը,* ▪ *ենթաակցիզային ապրանքների ժամանակավոր ներմուծումը կամ տարանցիկ փոխադրումը,* ▪ *օդուժի համար նախատեսված վառելիքի մատակարարումը,* ▪ *նավթի և գազի հետ կապված գործարքների իրականացման համար անհրաժեշտ նավթային ապրանքների ներմուծումը, մատակարարումը,* ▪ *այլ գործարքներ:* ▪
Շահութահարկ	▪ *բարեգործական և այլ անհատույց հատկացումները,* ▪ *հարկատուի գործունեությունից վնասները՝ այդ նվազեցման կիրառման նպատակով հաշվետու և նախորդող տարիներին հարկատուի գործունեությունից վնաս ունենալու դեպքում այն փոխանցվում է վնասի ստացման տարվան հաջորդող 5 տարիներ* ▪ *շահաբաժինները* ▪ *գյուղատնտեսական արտադրանքի իրացումից ստացվող եկամուտը և վերջինիս 10 տոկոսը չգերազանցող այլ եկամուտներ* ▪ *հաշմանդամներին տրվող վճարումները* ▪ *Եթե օտարերկրյա ներդրումներով ռեզիդենտի (բացառությամբ բանկերի) կանոնադրական կապիտալում օտարերկրյա ներդրողների փաստացի կատարած ներդրման ընդհանուր արժեքը 1998 թվականի հունվարի 1-ից հետո կազմում է առնվազն 500 մլն դրամ, ապա տվյալ ռեզիդենտի շահութահարկի գումարը նվազեցվում է՝ կախված ռեզիդենտի կանոնադրական կապիտալում օտարերկրյա ներդրման սահմանված չափաքանակը լրանալու տարեթվին (մինչև 2007 թ.) հաջորդող երկու տարիներին 100 տոկոսի չափով* ▪ *մաքսային օրենսդրության համաձայն ազատ տնտեսական գոտու կազմակերպիչ հանդիսացող ռեզիդենտի հաշվետու տարվա շահութահարկի գումարը նվազեցվում է 100 տոկոսով:* ▪ *օրենքով կարող են սահմանվել շահութահարկից ազատելու և հարկային օրենսդրությամբ նախատեսված այլ արտոնություններ:*	▪ *բարեգործական ընկերությունների եկամուտը, բացառությամբ ձեռնարկատիրական գործունեությունից ստացվածի* ▪ *դրամաշնորհները, անդամակցության վճարները և ոչ առևտրային կազմակերպություններից ստացված նվիրատվությունները* ▪ *միջազգային, միջպետական, միջկառավարական կազմակերպությունների եկամուտները, բացառությամբ ձեռնակատիրական գործունեությունից ստացվածի* ▪ *կենտրոնական իշխանության մարմինների, բյուջեից ֆինանսավորվող կազմակերպությունների և տեղական մարմինների եկամուտները, բացառությամբ ձեռնակատիրական գործունեությունից ստացվածի* ▪ *Ադրբեջանի ազգային բանկի, պետական նավթային ֆոնդի եկամուտը, բացառությամբ իր ֆոնդերի տեղաբաշխումից ստացված շահույթի* ▪ *հատուկ կրթական հաստատությունների եկամուտը, բացառությամբ բիզնեսի գործունեությունից ստացված եկամտի* ▪ *հարկային ապառքների դուրս գրումից եկամուտը,* ▪ *այլ եկամուտներ*	▪ *բյուջետային հիմնարկները, միջազգային և բարեգործական ընկերությունները* ▪ *կազմակերպությունների կողմից ստացված դրամաշնորհները, անդամակցության վճարները, նվիրատվությունները* ▪ *կրոնական նշանակության պարագաների վաճառքից շահույթը* ▪ *բժշկական հաստատությունների շահույթի այն մասը, որն ուղղվում է այդ ոլորտում ներդրումների իրականացմանը և օգտագործվում աշխատողների նյութական խրախուսման նպատակով* ▪ *մինչև 2007 թվականի հունվարի 1-ը գյուղատնտեսության ոլորտում զբաղված ֆիզիկական անձանց կողմից գյուղատնտեսական ապրանքների վաճառքից ստացված եկամուտը, եթե այն չի գերազանցում տարեկան 100 հազար լարին* ▪ *մինչև 2007 թվականի հունվարի 1-ը գյուղատնտեսական գործունեությունից ստացված շահույթը, եթե այն վերաներդրվել է այդ ոլորտում՝* ▪ *մինչև 2007 թվականի հունվարի 1-ը թերթերի, ամսագրերի վաճառքից և/կամ դրանց միջոցով իրականացված գովազդից ստացված շահույթը* ▪ *այլ եկամուտներ*

Եկամտահարկ	▪ *պետական նպաստները, որոշակի բացառություններով* ▪ *զինծառայողների և դրանց հավասարեցված անձանց զինվորական ծառայության հետ կապված եկամուտները* ▪ *ժառանգության և նվիրատվության կարգով ֆիզիկական անձանցից ստացված գույքը և դրամական միջոցները* ▪ *ոչ առևտրային կազմակերպությունների միջոցներից կանոնադրական գործունեության շրջանակներում ֆիզիկական անձանց ցույց տրվող օգնության գումարները* ▪ *պետական և տեղական ինքնակառավարման մարմինների որոշումների հիման վրա, ինչպես նաև օտարերկրյա պետությունների և միջազգային միջպետական (միջկառավարական) կազմակերպությունների կողմից տրվող օգնության գումարները.* ▪ *պարենային բավարարման արժեքը, ինչպես նաև այդ բավարարման փոխարեն վճարվող գումարները* ▪ *անհատույց ստացված՝ օրենքով սահմանված կարգով շնորհ համարվող միջոցները* ▪ *սեփականության իրավունքով իրենց պատկանող գույքի վաճառքից հարկային գործակալ չհանդիսացողներից ֆիզիկական անձանց ստացած գումարները՝ բացառությամբ ձեռնարկատիրական գործունեության հետևանքով գույքի վաճառքից ստացված գումարների* ▪ *պետական կրթաթոշակները* ▪ *ապահովագրական հատուցումները* ▪ *արժեթղթերից ստացված եկամուտը* ▪ *այն գումարները, որոնք օրենքով սահմանված կարգով ստացվում են որպես վնասի փոխհատուցում, բացառությամբ կորցված եկամտի փոխհատուցման* ▪ *արձակման նպաստի գումարը* ▪ *կենսաթոշակների կամավոր ապահովագրության պայմաններով վճարվող լրացուցիչ կենսաթոշակները* ▪ *մրցույթներում և մրցություններում ստացված դրամական մրցանակների արժեքը* ▪ *ֆիզիկական անձանց կողմից անհատական բնակարանային շինարարության նպատակով կառուցվող շինությունների գրավադրման դիմաց ստացված նպատակային վարկերի սպասարկման համար վճարվող տոկոսավճարները.* ▪ *կառավարության կողմից բարձրագույն ուսումնական հաստատությանը հատկացված վճարովի չափաքանակի շրջանակում սովորող ուսանողական համակազմի 10 տոկոսի ուսման տարեկան վարձի փոխհատուցման գումարները* ▪ *պետական պարգևները (մրցանակները)* ▪ *ստացված շահաբաժինները* ▪ *գյուղատնտեսական արտադրանքի իրացումից ստացված եկամուտը և այլ եկամուտը վերջինիս տաս տոկոսը չգերազանցող մասով* ▪ *բարեգործական և այլ անհատույց հատկացումները,* ▪ *այլ եկամուտներ*	▪ *դիվանագիտական ծառայությունների աշխատողների աշխատավարձը, որոնք լիազորված են ռոտացիոն ծրագրի շրջանակներում աշխատել այլ պետություններում, իրականացնել տեղեկատվական և տեխնիկական ծառայություններ: Ադրբեջանի քաղաքացի չհանդիսացող դիվանագիտական և ներկայացուցչական ծառայությունների աշխատողների եկամուտը* ▪ *Ադրբեջանի ռեզիդենտ չհանդիսացող անձի աշխատավայրից ստացվող եկամուտը, եթե այն վճարվել է Ադրբեջանի ռեզիդենտ չհանդիսացող գործատուի կողմից կամ անունից և չի վճարվել ոչ ռեզիդենտի մշտական հաստատության կողմից* ▪ *օրացուցային տարում որպես նվեր կամ ժառանգություն ստացված եկամուտը* ▪ *պետական նպաստները, չփոխհատուցվող պետական դրամաշնորհները, պետական կենսաթոշակները, կրթաթոշակները, բացառությամբ ժամանակավոր անաշխատունակության համար տրվող վճարների, ալիմենտները* ▪ *գործադիր իշխանության մարմինների որոշման հիման վրա պետական բյուջեի միջոցներից տրվող նյութական օգնությունը և միանվագ վճարները* ▪ *շարժական գույքի իրացումից եկամուտը, բացառությամբ թանկարժեք քարերի և մետաղների, դրանցից պատրաստված արտադրանքի, արվեստի գործերի, հնաոճ առարկաների, ինչպես նաև հարկատուի ձեռնարկատիրական գործունեության իրականացման համար նախատեսված գույքի* ▪ *ապահովագրական փոխհատուցման գումարները,* ▪ *անշարժ գույքի վաճառքից եկամուտը, որը հարկատուի ռեզիդենտության վայրում գտնվում է ոչ պակաս քան 3 տարի* ▪ *գյուղատնտեսական ապրանքների անմիջական արտադրողի եկամուտը այդ գործունեությունից,* ▪ *վիճակախաղերի շահումները* ▪ *ֆիզիկական անձին տրվող փոխհատուցման վճարները, որոշ կատեգորիաների մարդկանց ստացած եկամուտները* ▪ *այլ եկամուտներ*	▪ *երկրի տարածքում տեղակայված դիվանագիտական և դրան հավասարեցված հաստատությունների ոչ ռեզիդենտ աշխատակիցների եկամուտները* ▪ *պետական թոշակները, ոչ պետական կենսաթոշակային սխեմաներով ստացվող թոշակները* ▪ *ստացված կրթաթոշակները, պարգևները* ▪ *ալիմենտները* ▪ *2 տարուց ավել ֆիզիկական անձի սեփականություն հանդիսացող գույքի վաճառքից հավելաճը, բացառությամբ ձեռնարկատիրական գործունեության նպատակներով օգտագործվող գույքի* ▪ *հարկային տարում ժառանգության կամ այլ անփոխհատույց ձևով առաջին և երկրորդ կարգի ժառանգների ստացած գույքը* ▪ *հարկային տարում մինչև 1000 լարի արժողությամբ անփոխհատույց ձևով ստացված գույքը* ▪ *հարկային տարում ժառանգության կամ այլ անփոխհատույց ձևով երրորդ և չորրորդ կարգի ժառանգների ստացած մինչև 150 հազար լարի արժողությամբ գույքը* ▪ *ֆիզիկական անձ-ձեռնարկատիրոջ եկամուտը, որը չի ներգրավում վարձու աշխատուժ և իրականացնում որոշակի տեսակի գործառնություններ* ▪ *մինչև 2007 թվականի հունվարի 1-ը գյուղատնտեսական գործունեությամբ զբաղված ֆիզիկական անձանց եկամուտը, եթե այդ եկամուտը չի գերազանցում տարեկան 100 հազար լարին* ▪ *որոշակի կատեգորիաների մարդկանց ստացված եկամուտը, եթե այն չի գերազանցում 3000 լարին* ▪ *այլ եկամուտներ*

Պետական բյուջեից տրվող սուբսիդիաները՝Հայաստան, Աղրբեջան, Վրաստան

Հայաստան	***Աղրբեջան***	***Վրաստան***
2004 թվականին 18.4 մլրդ դրամի (ՀՆԱ մոտ 1 %) սուբսիդիա է հատկացվել, որից. ▪ *մշակույթ, տեղեկատվությանը, սպորտ և կրոն՝ 4.6 մլրդ դրամ,* ▪ *բնակարանային և կոմունալ տնտեսություն՝ 6.9 մլրդ դրամ,* ▪ *տրանսպորտ, ճանապարհային տնտեսություն և կապ՝ 0.6 մրդ դրամ,* ▪ *համայնքներին տրվող սուբվենցիաներ՝ 1 մլրդ դրամ,* ▪ *այլ ծրագրեր՝5.3 մլրդ դրամ:* *2005 թվականին նախատեսվում է հատկացնել 13.1 մլրդ դրամի սուբսիդիա, որից.* ▪ *բնակարանային և կոմունալ տնտեսություն՝ 2.5 մլրդ դրամ,* ▪ *տրանսպորտ, ճանապարհային տնտեսություն և կապ՝ 0.7 մրդ դրամ,* ▪ *համայնքներին տրվող սուբվենցիաներ՝ 0.3,* ▪ *այլ ծրագրեր՝9.6 մլրդ դրամ:*	*Էներգիայի արտադրության հետ կապված հիմնականում երկու ընկերությունների տրվել են սուբսիդիաներ: 2003 թվականին «Ազերէներգի» ընկերությանը տրվել է 1753 մլրդ. մանաթի սուբսիդիա (5% ՀՆԱ-ում), «Ազերիգազ» ընկերությանը 142 մլրդ. մանաթ (0.4% ՀՆԱ-ում) սուբսիդիա: Ընդ որում 2004 թվականի 9 ամիսների կտրվածքով SOCAR ընկերության կողմից կանխիկ վճարված հարկերի ծավալն ավելի փոքր է եղել, քան հարկային հետաձգումների ծավալը: Սրանք այն սուբսիդիաներն են, որոնք տրվել են SOCAR ընկերության հարկային վճարումների հետաձգման ձևով: Այսինք այս ընկերությունը նավթ է մատակարարել տվյալ կազմակերպություններին, որոնց դիմաց վերը նշված երկու ընկերությունները ժամանակին վճարումներ չեն կատարել: Եթե նավթի համաշխարհային գները մնան ներկայիս բարձր մակարդակին, ապա պետության համար այս սուբսիդիաների կրճատումը ավելի դժվար խնդիր կդառնա: Սուբսիդիաներ են տրվել նաև «Ազերքիմ» ընկերությանը և «Բաքու Մետրո» ընկերությանը, ինչպես նաև ջրամատակարարող ընկերություններին: «Ազերքիմ» ընկերության ֆինանսական դրության լավացման արդյունքում, ինչպես նաև «Բաքու Մետրո» ընկերության և ջրամատակարարող ընկերությունների կողմից 2005 թվականին մատուցվող ծառայությունների վարձավճարները բարձրացնելու արդյուքում այս ընկերությունների կախվածությունը սուբսիդիաներից նվազելու է:* *Տրվում են սուբսիդիաներ նաև տեղական բյուջեներին:*	*Հատկացվում են էներգետիկայի ոլորտին (2003թ. ՀՆԱ 0.4 %-ի չափով)՝ , հանրային հեռուստատեսությանը, ռադիոին և այլ ոլորտների: Ռադիոին և հեռուստատեսությանը, մասնավորապես, 2005 թվականին 16.5 մլն. լարիի (ՀՆԱ 0.2 %-ի չափով) սուբսիդիա է հատկացվելու: Հողի և գույքի հարկերի սուբսիդիաներ են տրամադրվում հաշմանդամներին, համրերի և կույրերի միություններին և նրանց կողմից հիմնադրված կազմակերպություններին:*